ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

8 (97)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 8 (97), 2018

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, տ.գ.թ.

Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
Տնտեսական գիտությունների թեկնածու

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ազլյան
Վահրամ Հովյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 8 (97), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
«Գաղութներ», «կայսրություններ» և անվտանգություն 4

Աշոտ Թևիկյան
Ռազմավարական կանխատեսման և պլանավորման
ռազմաքաղաքական խնդիրները 11

Սամվել Մանուկյան
Սոցիալական անհավասարության ընկալումները Հայաստանում
և դրանց հետևանքները 18

Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան
Մուլտիկուլտուրալիզմի ընկալումները և
մոդելի քարոզչությունն Ադրբեջանում……..... 27

Վահրամ Հովյան
Թուրքիայի հայ համայնքի
տնտեսական խնդիրների շուրջ 33

Արա Մարջանյան
Հում նավթի արդյունահանումն Իսրայելում ……..... 38

Արմեն Մանվելյան
Էներգետիկ վիճակագրությունն ըստ
Բրիթիշ Փեթրոլիումի նավթային բաղադրիչի ……..... 48

Հուշագիր հեղինակին 53

«ԳԱՂՈՒԹՆԵՐ», «ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան[*]

Այսօր նախկին խորհրդային հանրապետությունների, ինչու չէ՝ նաև նախկին «սոցճամբարի» որոշ երկրների տեղեկատվական դաշտում կարելի է հանդիպել ոչ քիչ թվով նյութերի՝ նվիրված «ծանր խորհրդային կայսերական և գաղութային ժառանգությանը»։ Որպես կանոն, նման հրապարակումները «խորհուրդներ» են պարունակում այն մասին, թե ինչ պետք է անել՝ արդեն մեր օրերում «ռուսական կայսերական գաղութային քաղաքականությանը» դիմակայելու համար։ Այս համատեքստում ԵԱՏՄ և ՀԱՊԿ անդամ հանրապետությունների նորաթուխ քաղաքական գործիչները և ԶԼՄ մեկնաբաններն առաջարկում են դուրս գալ այդ կառույցներից և այդպիսով «վերականգնել երկրի անկախությունը», ինչն էլ ինքնըստինքյան կհանգեցնի «և՛ տնտեսության աճին, և՛ անվտանգության ամրապնդմանը»։ Նշենք, որ նմանատիպ տեղեկատվական գործողություններն ունեն որոշակի ներգործություն (մասնավորապես՝ երիտասարդության վրա) և հասարակությունում կասկածներ ու անվստահություն են հարուցում եվրասիական ինտեգրացիոն գործընթացի հանդեպ ընդհանրապես [1]։ Բնական է, որ այս հանգամանքը, թեև անուղղակիորեն, բայց ազդեցություն է գործում նաև քաղաքական ընտրանու և դրանով իսկ՝ պետական մակարդակով ընդունվող որոշումների բնույթի վրա, ինչին էլ, ըստ էության, ձգտում են հասնել նման տեղեկատվական քաղաքականության ստրատեգները։ Ստեղծված իրավիճակը պայմանավորված է բազմաթիվ հանգամանքներով, որոնցից, մասնավորապես, նշենք հետևյալը.

- Հետխորհրդային երկրներում օտարերկրյա պետությունների և կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող բազմաթիվ հասարակական կազմակերպությունների առկայությունը, որոնց մի մասի խնդիրն են աշխարհաքաղաքական մրցակիցների դեմ տեղեկատվական գործողությունները, որոնք իրականացվում են փափուկ ուժի և հիբրիդային ռազմավարության բոլոր կանոններով;

[*] «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն։

- Նման ագիտացիոն և պրոպագանդիստական բնույթի տեղեկատվական գործողությունների արդյունավետությունը բավական բարձր է, քանի որ հետխորհրդային երկրների հասարակություններում նկատվում է կրթական-ինտելեկտուալ մակարդակի անկում, ինչն իր հերթին հանգեցնում է ԶԼՄ-ից ստացվող տեղեկությունների ոչ քննադատական և ոչ ադեկվատ ընկալման [2, 3];
- ԵԱՏՄ և ՀԱՊԿ համապատասխան կառույցների կողմից ինտեգրման գործընթացին ուղղված մտածված և համակարգային տեղեկատվական քաղաքականության բացակայություն՝ աշխարհաքաղաքական իրողությունների, այդ կազմակերպությունների անդամ երկրների հասարակությունների առանձնահատկությունների, արժեքների համակարգի և մենթալության հաշվառմամբ:

Նկատենք, որ վերջին կետում թվարկված գործոնները բավական խելամտորեն օգտագործվում են տեղեկատվական գործողություններում, որոնք իրականացնում են ԵԱՏՄ և ՀԱՊԿ մրցակիցները: Մասնավորապես, «ռուսական (խորհրդային) գաղութատիրություն և իմպերիալիզմ» բառերն ու հասկացությունները դարձել են յուրատեսակ *մեմեր*, որոնք մեթոդաբար և լայնորեն արծարծվում են՝ աստիճանաբար դառնալով հասարակական գիտակցության տարրեր, հատկապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչների շրջանում: Մինչդեռ, համառուսական պետական բազմազգ համակարգը սկզբունքորեն տարբերվում է կայսերական-գաղութային կառավարման արևմտյան մոդելներից, և այս համատեքստում ուշադրություն դարձնենք խորհրդային անցյալի որոշ փաստերի վրա:

«Խորհրդային-ռուսական գաղութատիրության» առանձնահատկությունները. Հայտնի է, որ գաղութատիրություն բառը և հասկացությունը մարդկանց մեջ բացասական հույզեր են առաջացնում: Գրեթե բոլոր բառարաններում այն նշանակում է ժողովուրդների, երկրների և տարածքների նվաճում և ստրկացում ռազմական և քաղաքական մեթոդներով: Մասնավորապես, նշվում է, որ գաղութարարները շահագործում են բնական հարստություններն ու տեղի աշխատանքը հօգուտ մետրոպոլիայի, ինչը հանգեցնում է տնտեսական զարգացման արգելակման և, ընդհանուր առմամբ, տվյալ երկրի ու նրա հասարակության դեգրադացման: Փորձենք այս տեսանկյունից հակիրճ դիտարկել, թե ինչ տեսք ուներ

գաղութատիրությունը Խորհրդային Միությունում, որտեղ, համաձայն որոշ քաղաքագետների, գաղութներ էին հանդիսանում ինչպես միութենական հանրապետությունները, այնպես էլ ինքնավար մարզերը։

Աղյուսակ 1.
Խորհրդային հանրապետություններում 1985, 1987, 1989 և 1990թթ. բնակչության մեկ շնչի հաշվով արտադրության և սպառման գումարային ցուցանիշները (ԱՄՆ դոլարով) և այդ ցուցանիշների հարաբերակցությունը[1]

Հանրապետությունը	Բնակչ. մեկ շնչի հաշվով արտադրությունը (1985, 1987, 1989 և 1990թթ., գումարային ցուցանիշը, $1000)	Բնակչ. մեկ շնչի հաշվով սպառումը՝ (1985, 1987, 1989 և 1990թթ., գումարային ցուցանիշը, $1000)	Սպառման և արտադրության ցուցանիշների հարաբերակցությունը, տոկոս
ՌԽՖՍՀ	65.600	50.400	76%
Բելոռուսիա	63.700	44.900	70%
Ուկրաինա	50.300	54.500	108%
Ղազախստան	42.000	51.800	123%
Ուզբեկստան	28.000	61.300	218%
Լիտվա	56.200	95.500	169%
Ադրբեջան	40.000	50.800	127%
Վրաստան	48.100	139.100	289%
Թուրքմենստան	35.200	68.700	142%
Լատվիա	68.500	90.200	131%
Էստոնիա	65.700	117.800	179%
Ղրղզստան	31.300	40.500	129%
Մոլդավիա	43.300	55.500	128%
Հայաստան	45.500	121.700	267%
Տաջիկստան	24.500	49.500	202%

Աղյուսակ 1-ում ներկայացված են 1985-1990թթ. խորհրդային բոլոր 15 հանրապետությունների բնակչության մեկ շնչի հաշվով արտադրության և սպառման միջինացված տվյալները, ինչպես նաև սպառման և արտադրության ցուցանիշների հարաբերակցությունը։ Ինչպես հետևում է այդ տվյալներից, ամենացածր սպառումը գրանցվել է ՌԽՖՍՀ-ում՝ ընդամենը արտադրված արտադրանքի 76%-ը, այսինքն՝ այսպես կոչված «գաղութարարը» սպառում էր ավելի քիչ, քան իր «գաղութները» և փաստորեն նրանց պահում էր ի հաշիվ սեփական ռեսուրսների։ Աղյուսակից նաև երևում է, որ բոլոր երեք սլավոնական հանրապետություններից

[1] Աղյուսակի ներկայացված ցուցանիշները ստացվել են *С.С. Сулакшин, В.Э. Багдасарян* «Цивилизационный феномен в российском государствообразовании» (http://rusrand.ru/ideas/civilizacionnyy-fenomen-v-rossiyskom-gosudarstvoobrazovanii) աշխատանքում ներկայացված տվյալների մշակման արդյունքում։

միայն Ուկրաինան մի փոքր ավելի է սպառել, քան արտադրել է: Հատկանշական է, որ Ուզբեկստանը, Վրաստանը և Հայաստանը Ռուսաստանի և Բելոռուսիայի համեմատ մոտ երեք անգամ ավելի են սպառել, քան արտադրել են: Սա վառ վկայությունն է այն բանի, որ ԽՍՀՄ-ում բացակայել է այսպես կոչված գաղութային էթնիկ շահագործումը, ինչն այնքան բնորոշ էր, օրինակ, բրիտանացի գաղութարարներին:

Սակայն վերադառնանք մեր օրեր և հակիրճ անդրադառնանք արդի Ռուսաստանի «գաղութային քաղաքականությանը»: Ինչպես հայտնի է, Սախայի Հանրապետությունում (Յակուտիա), որը հսկայական տարածք է զբաղեցնում (ավելի քան 300 հազ. կմ²), ապրում է ընդամենը մոտ 1 մլն մարդ: Այնինչ, այս սակավ բնակեցված հանրապետությունում այսօր գործում է 11 բուհ, որոնք հրապարակում են գիտական ամսագրեր և գրքեր, այդ թվում և Հյուսիսարևելյան դաշնային համալսարանի (*СВФУ*) *«Математические заметки»* հեղինակավոր ամսագիրը: Հանրապետությունում գործում են նաև 8 թատրոն և 2 խոշոր թանգարան[2]: Հարկ է խոստովանել, որ Սախայի Հանրապետությունը խիստ դժվար է գաղութ անվանել, և նման «գաղութ»-հանրապետություններ, որոնք իրենց ցուցանիշներով շատ նման են Յակուտիային, Ռուսաստանում ուղիղ 21-ն են: Այս համատեքստում ավելորդ չէ հիշել, որ ԱՄՆ տեղաբնիկները՝ հնդկացիները (որոնց թիվը գերազանցում է հինգ միլիոնը), հիմնականում ապրում են ռեզերվացիաներում և որևէ տնտեսական կամ մշակութային ռեսուրսի գրեթե չտիրապետելով՝ գլխավորապես զբաղվում են ծխախոտի և ալկոհոլի անաքցիզ առևտրով: Հետաքրքիր է, որ որպես այդ ժողովրդի ձեռքբերում նշվում է այն, որ համեմատաբար վերջերս հպարտ «վերջին մոհիկանները» և իրոկեզները սեփական խաղատներ հիմնելու իրավունք են ստացել[3]: Հասկանալի է, որ այս ոչ մեծ հոդվածում իմաստ չունի դիտարկել բնական պաշարներով հարուստ աֆրիկյան և մերձավորարևելյան բրիտանական կամ ֆրանսիական գաղութների օրինակները, քանի որ դրանցից շատերն այսօր էլ *դե ֆակտո* պահպանել են իրենց գաղութային կարգավիճակը, իսկ այդ երկրների բնակչությունը զանգվածաբար փախչում է դեպի Եվրոպա՝ հանապազօր հաց վաստակելու:

Անգամ ներկայացված մի քանի օրինակներից հետևում է, որ բազմազգ Ռուսաստանը ինտեգրող պետության ինքնատիպ տեսակ է, որն ար-

[2] https://ru.wikipedia.org/wiki/%D0%AF%D0%BA%D1%83%D1%82%D0%B8%D1%8F#.
[3] http://www.visionary.ru/stati/indeyskie-plemena-severnoy-ameriki.html

մատապես տարբերվում է կայսրության արևմտյան տեսակից: Այդ պետությունը բնակեցնող ժողովուրդներն ունեն ինքնավարության բարձր աստիճան, ինչը նպաստում է իրավահավասար, ուստի և սիներգետիկ մշակութային և տնտեսական փոխգործակցությանը: Ակնհայտ է նաև այն, որ ԽՍՀՄ փլուզումն ազատ արձակեց վիթխարի ապակառուցողական էներգիա, որը բացասաբար ազդեց նաև այդ երկիրը բնակեցնող ժողովուրդների հոգևոր ներուժի վրա: Մասնավորապես, տեղեկատվական առումով մեծ աշխատանք տարվեց սեփական ոչ վաղ անցյալի պատմությունը վարկաբեկելու և մոռացության տալու համար: Բայց և այնպես, այսօր տեղի է ունենում նախկին քաղաքակրթական-մշակութային մոդելի վերականգնում, որն էլ ընկած է հետխորհրդային հանրապետությունների միջև հարաբերությունների հիմքում: Չէ՞ որ հայտնի է, որ «ինտեգրված տարածքի մատրիցան» ոչ միայն հասարակության պատմական հիշողության տարր է, այլ նաև օբյեկտիվ գործոն»[4]: Այս իմաստով «հետխորհրդային երկրների» ինտեգրացիոն ձգտումները միանգամայն ադեկվատ են, մանավանդ հաշվի առնելով ազգային անվտանգության մարտահրավերները, որոնք առաջ են եկել արդի հիբրիդային իրողություններով և մինչ այս գոյություն ունեցող աշխարհակարգի էական փոփոխություններով պայմանավորված[5]: Այնինչ, «եվրասիական քաղաքակրթություն» բառակապակցությունը և այդ հասկացության մեկնությունները որևէ կերպ չեն նշվում և չեն մեկնաբանվում ԵԱՏՄ և ՀԱՊԿ երկրների տեղեկատվական տարածքում: Նման իրավիճակը պետք է ընդունել որպես լուրջ բացթողում բուռն ընթացող ագիտացիոն և պրոպագանդիստական բախումների պայմաններում:

Քաղաքակրթական գործոն. Վերը նշված գործոնները և նկատառումներն ամբողջովին վերաբերում են նաև Հայաստանին, որը ժամանակին բավական ներդաշնակորեն մտավ եվրասիական քաղաքակրթական համակարգ և ոչ միայն այդ համակարգի բարիքների սպառողն էր, այլև դարձավ բավական արդյունավետ դերակատար այդ տարածքում: Այս համատեքստում ավելորդ չէ հիշել պատմությունը, որի որոշ տարրեր ցայսօր չեն կորցրել իրենց արդիականությունը: Գուցե առաջին համոզված «եվրասիացին» հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրին էր (1658-1711): Օսմանյան և պարսկական լծից հայերի

[4] *Զ.Բաումաn,* «Прошлое России – это будущее России», http://www.rodon.org/polite-110519100638.
[5] *Федор Лукьянов*, Картина мироустройства превращается в непостижимую мозаику, http://www.rodon.org/polit-181011102611.

ազատագրության համար եվրոպական կառավարիչների օգնությունն ստանալու բազմաթիվ անհաջող փորձերից հետո նա 1701թ. ուղևորվեց Մոսկվա, որտեղ հանդիպեց Պետրոս 1-ինի հետ, որը խոստացավ օգնություն ցուցաբերել հայերին Շվեդիայի հետ պատերազմի ավարտից հետո: Բայց այն ժամանակ այդ ծրագրերին վիճակված չէր իրականանալ:

Իսրայել Օրու առաջարկներն իրագործվեցին 1827թ., երբ գեներալ Պասկևիչին հաջողվեց գրոհով վերցնել Էրիվանի բերդը և ազատագրել պարսկական տիրապետության տակ մտնող Արևելյան Հայաստանի մի մասը[6]: Հատկապես նշենք, որ այդ ժամանակ Էրիվանի խանությունում ապրում էր մոտ 30 հազար հայ, և միայն Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից հետո (1828թ.) այստեղ եկան ևս 50 հազար մեր հայրենակիցներ Թուրքիայից և Պարսկաստանից: Ընդհանուր առմամբ, 19-րդ դ. – 20-րդ դարասկիզբ ժամանակաշրջանում Հարավային Կովկասում բնակություն հաստատեց ավելի քան 1 մլն հայ[7], որոնք էլ դրեցին ժամանակակից հայոց պետականության հիմքերը՝ հանձինս Առաջին, Երկրորդ (Հայկ. ԽՍՀ) և Երրորդ հանրապետությունների: Պատմությունը ցույց է տալիս, որ Օրու և նրա համախոհների քաղաքակրթական կողմնորոշումը լիովին արդարացվեց: Օրինակը Հայաստանի երկրորդ Հանրապետությունն է (որը, միջազգային ֆինանսական և այլ կառույցների բացակայության պայմաններում, ուներ ավելի լայն ինքնիշխանություն իր ներքին գործերում, քան Երրորդը), որտեղ ներդաշնակորեն զարգանում էին բարձրտեխնոլոգիական արտադրությունը, գիտությունը և մշակույթը: Բավական է նշել այն փաստը, որ այդ հանրապետության բնակչությունը կազմում էր 4 մլն, իսկ 1980-ական թթ. վերջի ՀՆԱ ցուցանիշը ցայժմ մնում է չգերազանցված[8]: Միևնույն ժամանակ, հանրապետությունում գործում էին մոտ հարյուր մասնագիտացված ինստիտուտներ և կոնստրուկտորական բյուրոներ, որոնցում աշխատող հայ գիտնականներն ու տեխնոլոգները մեծ ավանդ են ներդրել մեծ տերության պաշտպանունակության բարձրացման գործում [4, 5]: Նշենք, որ այդ ավանդույթները (գուցե ոչ այն չափով, ինչ այն ժամանակ) շարունակվում են նաև այսօր[9]:

[6] http://erevangala500.com/page/46.html.

[7] https://bigenc.ru/domestic_history/text/4937627

[8] *Ю.А. Корчагин,* Рейтинг стран — бывших республик СССР по ВВП в 2016 году и в 1990г., http://www.lerc.ru/?part=articles&art=1&page=388).

[9] Տե՛ս, օրինակ, *Летающий гранатомет: армянские инженеры создали неуязвимое оружие?:* https://ru.armeniasputnik.am/society/20181007/14936089/letayushchij-granatomet-armyanskij-hajtek-otvetit-na-vrazheskie-avantyury.html

Թերևս, շարունակելով պաշտպանունակության և անվտանգության թեման՝ նշենք, որ Իսրայել Օրու ծրագրերը համահունչ էին թուրքական և պարսկական լծի տակ գտնվող հայերի ձգտումներին, որոնք 1804-1813 և 1826-1828թթ. ռուս-իրանական պատերազմներում մարտնչում էին Ռուսական կայսրության կողմում: Հայտնի է, որ հայ կամավորական ջոկատները ակտիվորեն մասնակցում էին նաև ռուս-թուրքական պատերազմներին և հենց այդ պատմական ժամանակաշրջանում էլ դրվեցին ռուս-հայկական մարտական գործակցության հիմքերը, որը, փայլուն դիմանալով համաշխարհային երկու պատերազմներին, շարունակվում է մինչ օրս: Բավական է հիշել, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ավելի քան 100 հայ արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման, Թամանյան դիվիզիան հաղթականորեն ավարտեց պատերազմը Բեռլինում, իսկ մի քանի հայ զորահրամանատարներ դարձան մարշալներ և ծովակալներ: Այս ամենի առիթով նշենք, որ պատմական հիշողության պահպանման քաղաքականության շրջանակներում նպատակահարմար է ընտրել հատուկ օր, որպեսզի ամեն տարի նշվի «Ռուս-հայկական մարտական գործակցության» օրը:

Սակայն, ցավոք, վերը նշված գործոնները և դրանց մեկնաբանությունները որևէ կերպ իրենց արտացոլումը չեն գտնում հայկական տեղեկատվական դաշտում: Գուցե ստեղծված իրավիճակը շտկելու համար հարկ է կազմակերպել ՀԱՊԿ ներկայացուցիչների և ազգային անվտանգության հարցերով զբաղվող փորձագետների համատեղ սեմինար՝ «ուղեղային գրոհ», որի ժամանակ էլ, ամենայն հավանականությամբ, կգտնվեն սույն հարցերի իրատեսական լուծումները:

Գրականություն

1. *Манукян С.,* «Социологическая проблематика и задачи Евразийской интеграции», доклад на Ежегодной конференции Евразийского экспертного клуба 20 декабря, Ереван, 2017.
2. *Арутюнян Г.,* Информационные и деиндустриализованные общества, 21-й Век, #4 (41), с. 6, 2016.
3. Տեղեկատվական անվտանգություն (խմբ.՝ Հարությունյան Գ.), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2017, 316 էջ:
4. *Арутюнян Г.,* Распад «системы» и формирование будущего, Ереван, НОФ «Нораванк», 2011.
5. Կրիտիկական ենթակառուցվածքները և ազգային անվտանգությունը (խմբ.՝ Հարությունյան Գ.), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2018 *(պատրաստվում է տպագրության):*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշոտ Թևիկյան[*]

Անդրկովկաս/Հարավային Կովկասի (որը ներառված է Չինաստանից մինչև Հյուսիսային Աֆրիկայի երկրներ ավելի լայն աղեղի մեջ) շուրջ միջազգային և ռազմաքաղաքական իրադրությանը բնորոշ է պահպանվող, առանձին շրջաններում ահագնացող անկայունությունը: Ավարտվեց Եվրասիականության զարգացման էվոլյուցիոն և համեմատաբար խաղաղ փուլը: Թե ինչպիսին կլինի այն, ինչին պետք է պատրաստվեն Անդրկովկասի երկրները և առաջին հերթին Հայաստանը՝ հուզում է հայ հանրության ամենալայն շրջանակներին:

Պետք է խոստովանել, որ Անդրկովկասի վերաբերյալ միջազգային և ռազմաքաղաքական իրադրության զարգացման ռազմավարական կանխատեսման և պլանավորման ոլորտի լուրջ, նպատակաուղղված հետազոտություններ (Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում և Մեծ Մերձավոր Արևելքում գրանցված բարդությունների պարագայում) չեն իրականացվել՝ չնայած դրանց ակնհայտ պահանջվածությանը: Սա ռազմաքաղաքական պրոբլեմատիկայի համալիր վերլուծության հանդեպ անբավարար ուշադրության արդյունք է: Միաժամանակ հասարակությունում սկսեցին գերիշխել պատրանքներն անխոռով, խաղաղ ապագայի վերաբերյալ, ինչն իր արտացոլումը գտավ 2007թ. Անվտանգության հայեցակարգում: Եվ միայն վերջին մի քանի տարիների իրադարձությունները և հատկապես ապրիլյան պատերազմը՝ հրահրված Թուրքիայի միջամտությամբ, հանգեցրին այն բանին, որ այդ պատրանքները սկսեցին հօդս ցնդել: Որպես հետևանք՝ ռազմաքաղաքական կանխատեսման և պլանավորման հարցերն այլևս չէին անտեսվում պաշտպանության նախարարության կողմից: Հայաստանի պաշտպանության նախարարության հրապարակած՝ 2018-204թթ. համար Բանակի արդիականացման յոթնամյա ծրագրի երկրորդ կետում («Նկատառումներ ռազմավարական պլանավորման վերաբերյալ»)

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ-խորհրդական:

արվում են եզրակացություններ այնպիսի հետազոտությունների արդյունքների գծով, որոնցում մասնավորապես արձանագրվում է.

Հենվելով Հայաստանում անվտանգության պայմանների առանձնահատկությունների և ռազմական սպառնալիքների բնույթի վրա՝ 2018-2024թթ. համար կանխատեսելի է, որ.

- Միջազգային հարաբերություններում կշարունակվի համագործակցության մթնոլորտի թուլացման միտումը, կպահպանվեն ռազմաքաղաքական հակասությունները անվտանգության տարբեր կազմակերպությունների և պետությունների միջև... որոնք բացասաբար կանդրադառնան Հայաստանի անվտանգության իրավիճակի վրա:
- Ռազմաքաղաքական իրավիճակը Հարավային Կովկասի տարածաշրջանում նախկինի պես կբնորոշվի չլուծված հակամարտություններով և տարածաշրջանում անվտանգության տարբնկալմամբ...
- ...Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորման հավանականությունը ցածր է...

Այնուհետև, ուշադրության առնելով այս իրողությունները և Հայաստանի Հանրապետության համար 2018-2024թթ. դրանց զարգացման միտումները՝ առաջարկվում են զինված ուժերի արդիականացման որոշակի քայլեր:

Որպես կանոն, թեմայի վերաբերյալ առկա հրապարակումները հիմնվում են առանձին անկախ փորձագետների էմպիրիկ գիտելիքի և փաստական նյութի էկլեկտիկ ընտրության վրա: Ըստ էության, նման կանխատեսումներն օգտակար են, բայց, որպես կանոն, դրանք չեն կրում համակարգային բնույթ և խիստ սուբյեկտիվ են: Որպես օրինակ կարելի է նշել *NIC*[1], ԱՄՆ «ուղեղային կենտրոնների»[2], առանձին փորձագետների (որոնց մեջ ամենաակտիվը ռուսաստանցի փորձագետներն են) մշակումները: Մի փոքր այլ են հայտնի փորձագետ Հրաչյա Արզումանյանի[3]՝ ռազմական և ազգային անվտանգության խնդիրներին նվիրված աշխատանքները:

[1] «The South Caucasus (Azerbaijan and Georgia) will want to remain at a greater distance from Russia, though Geor- gia's viability as a state may still be fragile. Armenia is more likely to remain a close and stable neighbor, while re- taining its own identity». NIC 2020 Project: Commonwelth Conference: Scenarios. December 2003.

[2] "U.S. policy toward the South Caucasus. Take Three" Eugene Rumer, Richard Sokolsky, and Paul Stronski. Carnegie Endowment for International Peace. May, 2017

[3] Кромка хаоса. Парадигма нелинейности и среда безопасности XXI века, М., ИД «Регнум», 2012 (Selecta XIX); Сложное мышление и Сеть, Ереван, Научно-образовательный фонд «Нораванк», 2011; Стратегия иррегулярной войны: теория и практика применения, М., ЦСОиП, 2014; Иррегулярные

Այսօր չափազանց ակտուալ և պահանջված են աշխարհաքաղաքական և տարածաշրջանային բնույթի պրոֆեսիոնալ և հիմնավորված կանխատեսումները: Ռազմաքաղաքական վերլուծության, կանխատեսման (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ) և պլանավորման նպատակը տրված ժամանակահատվածի համար գնահատական տալն է կողմերի միջպետական, սահմանային, միջդավանական, տնտեսական և այլ հակասություններին, որոնց լուծումը չի բացառում մեկ կամ երկու կողմերի ռազմական ուժի (այդ թվում և հիբրիդային) կիրառման հնարավորությունը: Նման հետազոտությունները կառավարման պրոցեսի կարևոր փուլերից են արտաքին քաղաքական ռազմավարության ձևավորման ոլորտում՝ պետության ռազմական անվտանգության ապահովման առումով, և կիրառվում են աշխարհում, առանձին տարածաշրջաններում և լարվածության օջախներում ռազմաքաղաքական իրադրության գնահատման համար: Խելամիտ ռազմավարական կանխատեսումը թույլ է տալիս սթափ գնահատել իրավիճակը, տեսնել ազգային անվտանգության այսօրվա և ապագա սպառնալիքները, ձևակերպել համարժեք պատկերացում ուժերի հավասարակշռության և զսպման ներուժի մասին: Նրանք կարող են ազգային անվտանգության համար պատասխանատու պետական կառույցներին, հայ գիտա-փորձագիտական հանրությանն առաջարկել ամբողջական պլանավորված կանխատեսական համակարգ ռազմաքաղաքական խնդիրների վերաբերյալ՝ անդրկովկասյան տարածաշրջանի շեշտադրումով: Նախապես հասկանալով, թե ինչ ուղղությամբ և ինչ դինամիկայով է փոխվելու այս կամ այն իրավիճակը՝ կարելի է կանխել շատ մարտահրավերներ, ինչպես նաև խուսափել սխալներից և ռազմավարական պլանավորման բացթողումներից, այդ թվում օրինաստեղծման ոլորտում:

Պատահական չէ, որ ներկայում ռազմական պլանավորման դերն առաջատար արևմտյան տերությունների քաղաքականության մեջ մշտապես աճում է: Ռազմական պլանավորմանն ավելի մեծ ուշադրություն է դարձվում նաև Հայաստանում:

Ինչպես գրում է Ջորջ Ֆրիդմանն իր «Ռազմավարական կանխատեսում. հետախուզական գործունեության օբյեկտիվ չափում» հոդվածում[4],

конфликты. Ближний Восток, М., АНО ЦСОиП, 2014; Центры власти в XXI веке, М., ЦСОиП, 2015; Стратегический анализ и инструменты стратегии, НОФ «Нораванк», Ереван, 2016; Информационная война в Сирии. Анализ, оценки, тенденции, М., АНО ЦСОиП, 2016, 248 с.; Третья стратегия противовеса: реакция Пентагона на новые угрозы, М., АНО ЦСОиП, 2017.

[4] hvylya.net/analytics/geopolitics/strategicheskoe-prognozirovanie-obektivnoe-izmerenie-razvedyivatelnoy-deyatelnosti.html

«Ռազմավարական կանխատեսումը վերաբերում է հետախուզական գործունեության այն մասին, որի կիզակետում են գտնվում այն իրադարձությունները, որոնք խոր, հիմնարար ներգործություն են թողնում միջազգային համակարգի վրա: Հաճախ նման իրադարձություններից մեկը դառնում է ուժ, որը նշանակալի այլ իրադարձությունների շղթայական ռեակցիա է առաջացնում: Նման ռազմավարական իրադարձություններն ունեն երկարաժամկետ հետևանքներ և ազդեցություն են գործում համաշխարհային համակարգի հիմնարար մեխանիզմների գործողության վրա, ինչի արդյունքում ամբողջ ազգեր շահեկան են դուրս գալիս կամ էլ տանուլ են տալիս»:

Նման կանխատեսումների ազդեցությունը և դրանց ենթադրվող հետևանքները, որոնք դիտարկվում են որպես ծավալված հիբրիդային պատերազմների արդյունք, հետապնդում են այլ պետությունների վրա տեղեկատվական ներգործության, պոտենցիալ հակառակորդին ապակողմնորոշելու նպատակ: Եվ դրանց դիմակայելու տեսանկյունից նման հետազոտությունները հրատապ են:

Միևնույն ժամանակ, ընդունելով նման մշակումների ակտուալությունը՝ կարծում ենք, որ հնարավոր սցենարների լիարժեք պատկերացման համար աշխարհաքաղաքական և տարածաշրջանային դիտանկյունից արտաքին և պաշտպանական քաղաքականության կանխատեսման և պլանավորման խնդրի կարևոր հավելյալ բաղադրիչ են ռազմատնտեսական, տնտեսական-քաղաքական, պետական-տնտեսական (ինստիտուցիոնալ), էներգետիկ, տրանսպորտային, գիտատեխնոլոգիական շերտերը: Մեր կարծիքով, դա այն կրիտիկական ենթակառուցվածքն է, որի վրա ամենամեծ ճնշումն է գործադրվում հիբրիդային պատերազմներում: Եվ ուսումնասիրելով արտաքին և պաշտպանական քաղաքականության կանխատեսման և պլանավորման անդրկովկասյան ուղղությունը՝ մենք անհրաժեշտ ենք համարում միաժամանակ քննարկել նաև խնդիրների այդ շերտը: Ըստ էության, մենք ելնում ենք մարքսյան այն հասկացությունից, որ տնտեսական զարգացումը վճռական դեր է խաղում հասարակության քաղաքական զարգացման մեջ:

Հետևաբար, անհրաժեշտ է ունենալ գիտական մեթոդաբանություն նշյալ ոլորտներում ռազմավարական կանխատեսման և պլանավորման և, մասնավորապես, դրա տարածաշրջանային դիտանկյան համար՝ զուգահեռաբար ուսումնասիրելով ռազմատնտեսական, տնտեսական-քա-

ղաքական, պետական-տնտեսական (ինստիտուցիոնալ), էներգետիկ, տրանսպորտային, գիտատեխնոլոգիական ասպեկտները:

Անդրադառնանք ևս մեկ կարևոր հանգամանքի: Մենք չենք ենթադրում սահմանափակվել զուտ վերլուծական հետազոտություններով: Աշխարհում ռազմաքաղաքական և ռազմավարական իրավիճակի զարգացման կանխատեսմանն օգնության են եկել արդի տեխնոլոգիաները: Եվ դրանում կարևոր մաս է կազմում մաթեմատիկական մոդելավորման ուղղությունը, որը մտնում է ռազմավարական վերլուծության գործիքակազմի մեջ[5]: Ներկայում ռազմական կանխատեսման տարբեր մաթեմատիկական մոդելներ են օգտագործվում, օրինակ, ՆԱՏՕ երկրներում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում և Չինաստանում:

Ընդգծենք, որ մաթեմատիկական մոդելները չեն փոխարինում և չեն կարող փոխարինել փորձագիտական գնահատականներին: Այս երկու մոտեցումները՝ փորձագիտական և մաթեմատիկական, լավ լրացնում են միմյանց՝ օգնելով փորձագետներին տալու ստույգ եզրակացություններ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության համար:

Հաջող ռազմավարական կանխատեսում կատարելը, հատկապես երկարաժամկետ հեռանկարի համար, դյուրին գործ չէ: Նման կանխատեսման հիմնական բարդությունները պայմանավորված են.

- համաշխարհային և տարածաշրջանային համակարգերի բազմագործոն լինելով, երբ կտրուկ ավելանում է այն տարրերի քանակը, որոնք պետք է հաշվի առնել կանխատեսումը կազմելու համար;
- անորոշությունների մեծ թվի առկայությամբ և տարատեսակությամբ, ինչպես նաև, մասնավորապես, մեկնարկային տեղեկատվության անլիարժեքությամբ/անհստակությամբ;
- գործընթացների կանխատեսման չափազանց դժվար լինելով, թույլ կանխատեսելի և դինամիկ փոփոխություններով (սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական, կրոնական, ազգային և այլ հակասություններ)՝ շրջապատում, արտաքին միջավայրում տեղի ունեցող տուրբուլենտ փոփոխությունների պայմաններում;
- վարքային գործոնների հաշվառման անհրաժեշտությամբ:

Կառավարչական ինտեգրացիայի սկզբունքները պահանջում են հավասարակշռություն հաստատել ռազմավարական, մարտավարական

[5] Стратегический анализ и инструменты стратегии. Глава 4. “Краткий обзор инструментов стратегии”, с. 68-108.

(պլանավորման գործընթացների կառուցում) և օպերացիոն (գործընթացների սինքրոնացում միջֆունկցիոնալ և միջկազմակերպչական ինտեգրացիայի պայմաններում) մակարդակների միջև: Մոդելների տարբեր տեսակները (կառուցվածքային-ֆունկցիոնալ, էվրիստիկ, այդ թվում՝ փորձագիտական, վիճակագրական, մաթեմատիկական (օպտիմիզացիոն), ստոխաստիկ, իմիտացիոն), որոնք կիրառվում են կառավարման տարբեր մակարդակներում և տարբեր խնդիրների լուծման համար, պետք է կառուցվեն հետերոգեն բնության բազմամոդել համալիրներում՝ միասնական մեթոդաբանական սկզբունքների և իմաստային միասնության հիման վրա:

Նշված իմիտացիոն մոդելավորման առավել հայտնի հարացույցներն են. դիսկրետ կամ պրոցեսային-կողմնորոշված մոտեցումը (*DES*), համակարգային դինամիկան (*SD*), գործակալական մոդելավորումը (*ABMS*): Մոդելավորման համապատասխան պարադիգմի ընտրությունը կարևոր քայլ է մոդելի մշակման գործընթացում և սահմանափակում է դրա կիրառման ոլորտները ռազմավարական առումով գործընթացների և երևույթների դինամիկայի նկարագրման, կոնկրետ խնդիրների լուծման մասով:

Կարելի է արձանագրել, որ արդյունավետ համակարգային և մոդելային լուծումները կառավարման մեջ կառուցվում են.

- կառավարչական ինտեգրացիայի սկզբունքների և տարբեր մոդելների սկզբունքների համաձայնեցման ռազմավարական, մարտավարական և օպերացիոն լուծումների միջև հավասարակշռության հիման վրա;
- բազմահամակարգային պատկերացումների և առարկայական մոդելավորման ոլորտում;
- սիներգետիկ հարացույցով և դրա հիման վրա իրականացվող կոմպոզիտ համակարգային-դինամիկ կառուցվածքային դինամիկան և գործակալական մոդելներով, որոնք թույլ են տալիս նկարագրել մեզոմակարդակում, ինչպես նաև ինքնակազմակերպման գործընթացները միկրոմակարդակում, որոնք իրականացվում են գործակալների վարքագծի միջոցով:

Վերը նշված մոդելների վրա հիմնված մեթոդաբանությունը թույլ է տալիս կառուցել համալիր կանխատեսումներ, որոնք հաշվի են առնում մեծ տարածաշրջանի միջազգային և ռազմաքաղաքական իրադրության զարգացման դինամիկան: Այս մեթոդաբանության հիման վրա արված

կանխատեսումները լավ հենք են ստեղծում արտաքին և պաշտպանական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, գիտատեխնոլոգիական և ինստիտուցիոնալ քաղաքականությունների արդյունավետ պլանավորման համար: Նման համալիր մոտեցումը երկարաժամկետ ռազմավարական պլանավորման վերաբերյալ կօգնի Հայաստանի ղեկավարությանը, պետական կառույցներին և պաշտպանական համալիրին հավուր պատշաճի պատրաստվել աճող տուրբուլենտությանն արդի միջազգային հարաբերություններում: ՀՀ ԶՈՒ ԳՇ Ռազմավարական պլանավորման վարչության պետ Գ.Վ. Տավարաձյանը նշում է[6]. «Պաշտպանության ռազմավարական պլանավորումը ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության և նպատակների, ուժերի, միջոցների և զինված պայքար վարելու միջոցների որոշման, դրա կազմակերպման և ապահովման վերլուծության գործընթացն է: Դա նշանակում է օպերատիվ-ռազմավարական հաշվարկների իրականացում, կանխատեսումների և ռազմավարական պլանավորման համապատասխան փաստաթղթերի մշակում: Դրա հիմնական խնդիրներն են պետության շուրջ անվտանգային միջավայրի, ռազմաքաղաքական, աշխարհատնտեսական և ռազմավարական իրադրության գնահատումը պլանավորվող ժամանակի ընթացքում, ռազմական սպառնալիքների և մարտահրավերների սահմանումը և կանխատեսումը... Պաշտպանության ռազմավարական պլանավորումը կարելի է բաժանել մի քանի փուլերի՝ ԶՈՒ առաքելության և նպատակների սահմանում, միջավայրի վերլուծություն...»:

Հայկական ռազմական և քաղաքական միտքը, գտնվելով նոր լուծումների ակտիվ որոնումների մեջ, պետք է էլ ավելի ընդլայնի հետազոտությունների ոլորտները, որոնք թույլ կտան կարգավորել ռազմական պլանավորման համակարգը, թոթափվել սուբյեկտիվիզմից և օժտել այն նորագույն տեխնոլոգիական ապարատով: Եվ կանխատեսումների մոդելի կառուցման մեթոդաբանության ընտրությունը դրա արդյունավետության գլխավոր նախադրյալն է:

Հոդվածի՝ հետագայում հրապարակման պատրաստվող երկրորդ մասում կներկայացնենք ենթադրվող մոդելի մեթոդաբանության տեսական հիմքը, ինչպես նաև ազգային անվտանգության ոլորտում վերլուծության համակարգի, ռազմավարական կանխատեսման և պլանավորման հիմքերը:

[6] «Հայկական բանակ», 2018, N 1-2:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Սամվել Մանուկյան[*]

Խնդիրը

Սոցիալական անհավասարությունն արդի աշխարհի ամենասուր խնդիրն է: XX դարում այդ խնդիրը սկզբունքային լուծում ստացավ ԽՍՀՄ-ում՝ առաջին սոցիալիստական երկրում, քանի որ անհավասարության վերացումը կոմունիստական գաղափարախոսության սոցիալական ուսմունքի հիմնասյուներից մեկն էր: ԽՍՀՄ սոցիալական քաղաքականության նպատակներն էին՝ մարդկանց միջև սոցիալական անհավասարության, քաղաքի և գյուղի, երկրի կենտրոնական արդյունաբերական հատվածի և թերզարգացած ծայրամասերի, տարբեր ազգերի և էթնիկ խմբերի կենսապայմանների, տնտեսական և մշակութային պայմանների միջև անհավասարության վերացումը:

Սոցիալական անհավասարության հարցում ԽՍՀՄ հաջողությունները զարգացած կապիտալիստական երկրների մտավորականության և հասարակության լայն շրջանակներում բարձրացնում էին սոցիալիզմի՝ որպես գաղափարախոսության և ավելի առաջավոր հասարակարգի վարկը: Այդ երկրներում ընդլայնվում էին սոցիալիստական շարժումները, բարձրանում էր հեղափոխական կամ պառլամենտական ճանապարհով հասարակարգի փոփոխության հավանականությունը: Այս պրոցեսները զարգացած կապիտալիստական երկրներին ստիպեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել իրենց հասարակությունների բարեկեցության բարձրացմանը՝ նվազեցնելով շահույթի և բարձրացնելով աշխատանքի վարձատրության նորման: Կորուստը կոմպենսացվում էր գլոբալ տնտեսական էքսպանսիայով: Այս միջոցները ոչ միայն նվազեցնում էին սոցիալիստական հեղափոխությունների ռիսկը, այլև իրենց երկրներում կազմավորում էին կապիտալիստական տնտեսության զարգացման համար անհրաժեշտ վճարունակ պահանջարկ, իսկ երրորդ աշխարհում՝ նոր շուկաներ: Բացի

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ, սոց.գ.թ.:

դրանից, հեղափոխությունների կանխարգելումը մարդկանց տնտեսական վիճակի բարելավման միջոցով ավելի էժան էր, քան հեղափոխությունների և դրանց հետևանքների տնտեսական վնասների վերացումը:

Համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզումից հետո, ինչպես զարգացած, այնպես էլ երրորդ աշխարհի երկրներում սոցիալիստական հեղափոխությունների ռիսկը խիստ նվազեց: Վերացավ հասարակության լայն զանգվածներին, հատկապես միջին խավին «սիրաշահելու» անհրաժեշտությունը[1]: Խորհրդային երկրների տնտեսությունների փլուզումը հանգեցրեց հասարակությունների ծայրահեղ աղքատացմանը: Իսկ հետխորհրդային հասարակություններում կապիտալիզմի հաստատումը պատմական «դասական» ձևերով հանգեցրեց աննախադեպ անհավասարության առաջացմանը:

Չնայած կապիտալիստական տնտեսությանը ներհատուկ պարբերական տատանումներին, ներկայիս գլոբալ միտումն է տնտեսական և դրանից բխող սոցիալական անհավասարության աճը, ինչպես առանձին տարածաշրջանների ու երկրների, այնպես էլ հասարակական խմբերի միջև: Այդ անհավասարությունը գլոբալ սպառնալիքներն առաջացնող գլխավոր գործոններից մեկն է:

Ակնհայտ է, որ սոցիալական անհավասարությունը մեծ խնդիր է նաև Հայաստանի հասարակության համար: Դրա մասին է վկայում այն, որ 2008-2016թթ. ընթացքում Հայաստանի 10% ամենահարուստ բնակչության եկամուտների հարաբերությունը 10% ամենաաղքատ բնակչության եկամուտներին աճել է 14.1 անգամից մինչև 17.5 անգամ: Ճիշտ ընկալելու համար իրավիճակը՝ նշենք, որ Մեծ Բրիտանիայում այդ հարաբերության գերազանցումը 10 անգամից համարվում է ազգային անվտանգության լուրջ սպառնալիք:

Հոդվածում համապետական մասշտաբի ներկայացուցչական զանգվածային սոցիոլոգիական հետազոտության տվյալների շտեմարանի վերլուծության միջոցով ներկայացված է Հայաստանի հասարակությունում սոցիալական անհավասարության ընկալումների ընդհանուր մակարդակը՝ 2017թ. և դրա արտահայտությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Գնահատված է սոցիալական անհավասարության ընկալումների ազդեցությունը հասարակական կայունության վրա:

[1] Այդ կապակցությամբ առաջացավ երգիծական դարձվածք. «Վերջ, երեկույթն ավարտվեց՝ անցեք ինտենսիվ աշխատանքի»:

Գծապատկեր 1.
Անհավասարության դինամիկան Հայաստանում 2008-2016թթ.: Աղբյուրը «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ՀՀ ԱՎԾ, 2017, էջ 141



Սոցիալական անհավասարության ինտենսիվությունը և ասպեկտները

Հայաստանում սոցիալական անհավասարության ընկալումները գնահատվել են հետևյալ հարցի միջոցով. «Հավասա՞ր են արդյոք այսօր Հայաստանում մարդկանց հնարավորությունները…», որից հետո թվարկվել են հասարակական կյանքի 13 ոլորտներ: Գծապատկեր 2-ի տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի հասարակությունում սոցիալական անհավասարության ընկալումները լիովին համապատասխանում են Գծապատկեր 1-ից բխող այն եզրակացությանը, որ Հայաստանում սոցիալական անհավասարությունը **օբյեկտիվորեն շատ բարձր է:**

Տվյալների գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ դիտարկված 13 ոլորտներում անհավասարության ընկալումները խմբավորված են երեք աշխարհայացքային համալիրներում:

Առաջին աշխարհայացքային համալիրը (գործոնը)՝ «*Սոցիալական լիֆտերի անհավասար մատչելիությունն*» է: Այս կոմպլեքսում միավորվել են այն ոլորտները, որոնք վերաբերում են անհավասարությանը մարդու *սոցիալական կարգավիճակի բարձրացման* տեսակետից: Մասնավորապես, քաղաքական համակարգում՝ անհավասարությունը մարդկանց միջև ԱԺ պատգամավոր ընտրվելիս ընկալում է հասարակության 91%-ը: Պետական կառավարման համակարգում՝ անհավասարությունը պետական պաշտոնում առաջընթացի տեսակետից ընկալում է հասարակության 88%-ը[2]: Տեղական ինքնավարության համակարգում՝ անհավասա-

[2] Հարկ է ընդգծել, որ ուսումնասիրվել է ոչ թե «պետական պաշտոն զբաղեցնելը», այլ «պետական պաշտոնում առաջընթացը»:

րությունը համայնքի ղեկավար ընտրվելիս ընկալում է 86%-ը: Եվ տնտեսական համակարգում՝ անհավասարությունը բիզնես սկսելիս ընկալում է 87%-ը, իսկ խոշոր ձեռնարկություններում պաշտոնի կամ մասնագիտական առաջընթացի տեսակետից ընկալում է 84%-ը:

Գծապատկեր 2.

Տարբեր ոլորտներում սոցիալական անհավասարության ընկալումները և դրանց աշխարհայացքային համալիրները Հայաստանի հասարակությունում, 2017



Երկրորդ աշխարհայացքային համալիրն (գործոնն) է *«Անհավասարությունը պետության հետ հարաբերություններում»:* Այս համալիրը միավորում է անհավասարության ընկալումը մարդու կողմից հետևյալ ոլորտներում՝ «պետության հետ հարցեր առաջանալիս»՝ անհավասարություն է ընկալում 86%-ը, «դատարանում սեփական շահերը պաշտպանելիս»՝ անհավասարություն է ընկալում 85%-ը, «ոստիկանության հետ հարցեր առաջանալիս»՝ անհավասարություն է ընկալում 83%-ը և «բանակում ծառայելու տեսակետից» անհավասարություն է ընկալում 71%-ը:

Երրորդ աշխարհայացքային համալիրն է *«Անհավասար սոցիալական պաշտպանվածությունը»*, որը միավորում է անհավասարության ընկալումները հիվանդանոցում որակյալ բուժում ստանալու տեսակետից՝ անհավասարություն է ընկալում 80%-ը, պոլիկլինիկայում որակյալ բուժօգնություն ստանալու տեսակետից՝ 69%-ը, բարձրագույն կրթություն ստանալու տեսակետից՝ 73%-ը, իսկ դպրոցում լավ կրթություն ստանալու տեսակետից, որտեղ անհավասարության ընկալումը համե-

մատաբար ավելի ցածր է, սակայն, այնուամենայնիվ, անհավասարություն է ընկալում հասարակության 57%-ը:

Հայաստանում սոցիալական անհավասարության ընկալման մասշտաբի մասին պատկերացում է տալիս *Սոցիալական անհավասարության ընկալման ինդեքսը,* որը ցույց է տալիս, թե տվյալ անձը դիտարկված 13 ոլորտներից քանիսո՞ւմ է սոցիալական անհավասարություն ընկալում[3]: Այդ ինդեքսի բաշխումը տրված է Գծապատկեր 3-Ա-ում: Գծապատկերից երևում է, որ Հայաստանի յուրաքանչյուր երրորդ անձը (32%) սոցիալական անհավասարություն է ընկալում բոլոր 13 դիտարկված ոլորտներում, մոտ կեսը (47%) անհավասարություն է ընկալում 12 կամ ավելի ոլորտներում, 61%-ը 11 և ավելի ոլորտներում, համարյա 80%-ը՝ 9 և ավելի ոլորտներում:

Գծապատկեր 3.

Անհավասարության ընկալումները Հայաստանում:





Հայաստանում անհավասարության ընկալման համակարգային բնույթը

Հարց է առաջանում. արդյո՞ք հասարակության տարբեր շերտերում սոցիալական անհավասարության ընկալումներն էապես տարբերվում են միմյանցից[4]:

Վերլուծությունը ցույց տվեց, որ սոցիալ-ժողովրդագրական խմբերում, մասնավորապես սեռի, բնակավայրի տիպի, բարեկեցության, կրթու-

[3] Ինդեքսի կառուցումը հիմնավորված է, քանի որ դիտարկված 13 փոփոխականների համար Կրոնբախի α-ն հավասար է 0.881-ի:

[4] Կիրառվել է սոցիալական տարբեր շերտերում սոցիալական անհավասարության ինդեքսի միջին արժեքների և մեդիանների դիսպերսիոն վերլուծություն:

թյան, աշխատանքային կարգավիճակների տարբեր կատեգորիաներում, անհավասարության ընկալումների միջին արժեքները և մեդիանաները վիճակագրորեն միմյանցից չեն տարբերվում: Դրանք վիճակագրորեն տարբերվում են տարիքային խմբերում. որքան ավելի բարձր է տարիքը, այնքան ավելի սուր են ընկալվում անհավասարությունը: Տարբերվում են նաև աշխատանքային կարգավիճակներ մի քանի յուրահատուկ խմբերում՝ ուսանողները, գործատուները և ֆերմերները սոցիալական անհավասարությունն ընկալում են համեմատաբար ավելի մեղմ, քան թոշակառուները: Գծապատկեր 3-Բ-ում տրված են *անհավասարության ընկալման ինդեքսի* առավելագույն արժեքը (Max=13), միջին արժեքը ամբողջ հասարակության համար (ՀՀ միջին = 10.4), ինդեքսի միջին արժեքները տարիքային խմբերում, ինչպես նաև թոշակառուների և ուսանողների շրջանում, որոնց համար սոցիալական անհավասարության ընկալումներն ամենաբարձրը և ամենացածրն են: Հատկանշական է, որ ուսանողների խմբում ինդեքսի միջին արժեքը (9.5) նույնն է 18-29 տարեկանների խմբի միջին արժեքի հետ (9.5), իսկ թոշակառուների խմբում (11.5) այն մոտ է 60 և ավելի տարեկանների խմբի միջին արժեքին (11.2):

Ստացված արդյունքը նշանակում է, որ Հայաստանի հասարակությունում սոցիալական անհավասարության ընկալումները կրում են համակարգային և համապարփակ բնույթ՝ դրանք կախված չեն անձի հիմնական սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնութագրերից:

Նշենք նաև, որ սոցիալական անհավասարության ընկալման ինտենսիվությունից կախված չէ նաև անձի՝ Հայաստանից հեռանալու դիրքորոշումը: Այսինքն՝ բնակչության ինտենսիվ արտահոսքը չի նվազեցնում հասարակությունում սոցիալական անհավասարության ընկալման մակարդակը և համապարփակ բնույթը:

Սոցիալական անհավասարության ընկալումները և հասարակական կայունությունը

Տվյալների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Բրիտանիայում սոցիալական անհավասարության բարձր մակարդակի նույնականացումը որպես ազգային անվտանգության սպառնալիք ճիշտ է նաև Հայաստանի համար:

Ցանկացած հասարակությունում սոցիալական տարբեր խմբերի միջև առկա են սոցիալական օբյեկտիվ և սուբյեկտիվ լարվածություններ և դրանց ընկալումներ: Դրանց բարձր մակարդակը և ոչ ադեկվատ կա-

ռավարումը կարող են հանգեցնել սոցիալական կոնֆլիկտների, երբեմն՝ խիստ դեստրուկտիվ կոնֆլիկտների: Հաճախ այդ լարվածությունները կառավարվում են արտաքին ուժերի կողմից:

Հետազոտությունում ուսումնասիրվել է այն հարցը, թե արդյոք Հայաստանի հասարակությունում սոցիալական անհավասարության ընկալումներն ազդում են սոցիալական լարվածությունների մակարդակի վրա և, եթե այո, ապա ինչ ինտենսիվությամբ: Ուսումնասիրվել է սոցիալական անհավասարության ազդեցությունը դասակարգային լարվածությունների (հարուստների և աղքատների միջև, աշխատավոր մարդկանց և ձեռնարկությունների տերերի միջև), ներէթնիկ լարվածությունների (Հայաստանի և Ղարաբաղի հայերի միջև) և քաղաքական լարվածությունների (պետության և հասարակ ժողովրդի միջև, իշխանության և ընդդիմության միջև) վրա: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4.

Սոցիալական անհավասարության ընկալման աճի ազդեցությունը սոցիալական լարվածությունների ընկալման մակարդակի վրա



Գծապատկեր 4-ի տվյալները ցույց են տալիս, որ սոցիալական անհավասարության ընկալումն ազդում է բոլոր դիտարկված սոցիալական լարվածությունների մակարդակների վրա՝ անհավասարության ընկալման աճը բարձրացնում է սոցիալական լարվածությունների մակարդակը և, հետևաբար, կոնֆլիկտների առաջացման (հրահրման) հավանականությունը:

Այդ ազդեցության ինտենսիվությունը շատ բարձր է: Սոցիալական անհավասարության ինդեքսի աճը 0-4 արժեքների տիրույթից մինչև 12-13 արժեքների տիրույթը բարձրացնում է դասակարգային և միջէթնիկ լարվա-

ծությունների մակարդակը 20%-ով: Այդ ազդեցության ինտենսիվությունն ամենաբարձրն է քաղաքական լարվածության՝ «Պետության և հասարակ ժողովրդի միջև» բաղադրիչի վրա՝ 27%: Համեմատաբար ավելի ցածր է «Իշխանության և ընդդիմության միջև» լարվածության ընկալման վրա՝ 13%:

Եզրակացություններ

Ներկայացված վերլուծությունից բխում են մի շարք եզրակացություններ:

Հայաստանի հասարակությունում սոցիալական անհավասարության օբյեկտիվ գնահատականները և դրանց ընկալումները շատ բարձր են և լուրջ սպառնալիք են հասարակական կայունության, հետևաբար, ազգային անվտանգության տեսակետից: Սոցիալական անհավասարության զգացողությունն ուժեղացնում է քաղաքական, դասակարգային և ներէթնիկ լարվածությունների ընկալումները: Սոցիալական անհավասարության և սոցիալական լարվածությունների նշված ընկալումները հանդիսացել են 2018թ. ապրիլի իշխանափոխությանը նպաստող գործոններ:

Հիմքեր կան ենթադրելու, որ 2018թ. ապրիլյան իշխանափոխությունը նվազեցրել է, և ունակ է է՛լ ավելի նվազեցնելու, սոցիալական անհավասարության ընկալումների մի շարք բաղադրիչները, մասնավորապես՝ սոցիալական լիֆտերի մատչելիության տեսակետից (ընտրվել ԱԺ պատգամավոր, պետական պաշտոններում կարիերա, ընտրվել համայնքի ղեկավար), պետական ճնշումների նկատմամբ անհավասար պաշտպանվածության տեսակետից (դատարանում սեփական շահերի պաշտպանություն, պետության և ոստիկանության հետ հարցեր), սոցիալական պաշտպանվածության ոլորտում (անհավասարություն բանակում ծառայության տեսակետից): Կարևոր խնդիր է այդ դինամիկայի գնահատումը:

Իրավունքի գերակայության հաստատումը Հայաստանում կբացահայտի բոլոր տեսակի անհավասարությունների օբյեկտիվ հիմքի՝ տնտեսական անհավասարության ընկալումները և կսրի դրանից բխող լարվածությունների աճը: Այդ դեպքում անհավասարության բացատրությունը վերնախավային խմբերի օրենքից բարձր գտնվելու, նեպոտիզմի կոռուպցիայի, նեպոտիզմի առկայությամբ կկորցնի գաղափարախոսական և քարոզչական ազդեցության ուժը:

Հետևաբար, անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական ոլորտների քաղաքականությունն-

րի քննական վերլուծություն՝ պատասխանելու համար այն հարցին՝ արդյո՞ք դրանք օբյեկտիվորեն բարձրացնում, թե՞ իջեցնում են անհավասարությունը, ինչպես նաև դրանց հասարակական ընկալումը: Անհրաժեշտության դեպքում այդ քաղաքականությունները պետք է համապատասխան կերպով մոդիֆիկացնել: Չի բացառվում նաև, որ առաջանա այդ քաղաքականությունների հիմնական գաղափարների արմատական վերաձևակերպման անհրաժեշտություն:

ՄՈՒԼՏԻԿՈՒԼՏՈՒՐԱԼԻԶՄԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄՈԴԵԼԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Դիանա Գալստյան[*], *Լիլիթ Հակոբյան*[**]

Բազմամշակութայնությունը (մուլտիկուլտուրալիզմ) և գլոբալ քաղաքացիական հասարակության ձևավորումը համարվում են աշխարհի զարգացման ունիվերսալության (լիբերալիզմ) և առանձին մշակույթների ու քաղաքակրթությունների զարգացման առանձնահատկության (կոմունիտարիզմ) սուր հակասությունը հաղթահարելու ամենակարևոր միջոցները:

Մուլտիկուլտուրալիզմի կոնցեպտը գիտական շրջանառության մեջ է մտել 1960-ական թթ. Կանադայում, հետագայում՝ 1980-ականներին, լայն տարածում է գտել Եվրոպայում: Ռուս հետազոտող Ե.Պանինը տերմինը բնորոշում է որպես «թարմ» կոնցեպտ, որը հստակ սահմանված չէ, տարբեր երկրներում օգտագործվում է տարբեր համատեքստերով: Չնայած իր անորոշությանը՝ տերմինի հանրամատչելիության հիմնական կանխադրույթը մնում է այն, որ երկրի (տարածաշրջանի, ամբողջ աշխարհի) մշակութային տարբերությունն ընդունվում է որպես արժեք, ինչպես նաև անհնարին է դառնում մշակույթների դասակարգումն ըստ բարձր–ցածր, առաջնային–երկրորդական, պետականաշինական և այլ սկզբունքների: Բազմամշակութայնության նպատակն է նոր հասարակական և քաղաքական հարաբերությունների կառուցումը՝ հաղթահարելու համար խոր արմատացած անհավասարությունը, որը պահպանվել է խտրականության ֆորմալ վերացման արդյունքում: Կոնցեպտուալ տեսանկյունից նշանակում է, որ ազգ հասկացությունը վերիմաստավորվում է ոչ թե որպես «ցեղակիցների» ամբողջություն, որն ունի ընդհանուր անցյալ, արմատներ և այլն, այլ որպես քաղաքացիների համախումբ, ովքեր կարող են միմյանցից տարբերվել մշակութապես, լեզվով, տոնել տարբեր տոներ, նույնիսկ դավանել այլ կրոններ[1]:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:
[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] *Уилл Кимлика*, Взлет и падение мультикультурализма?, Дискурс-Пи: науч. журн. / Ин-т философии и права Урал. отд-ния Рос. акад. наук, 2013, вып. 11-12, 318 с.

Տերմինն օգտագործվում է հաճախ հանդուրժողությանը (տոլերանտությանը) զուգահեռ՝ մատնանշելով հասարակությունում առկա կոնկրետ խմբերի, օրինակ՝ Եվրոպայում այն օգտագործվում է հիմնականում միգրանտների մասին խոսելիս, Կանադայում՝ ֆրանկոֆոնների և այլն:

Վերջերս մեդիայում ակտիվ քննադատվում է Եվրոպայում մուլտիկուլտուրալիզմի քաղաքականությունը: Խոսվում է վերջինիս անկման մասին՝ հղում անելով տարբեր քաղաքական գործիչներին: 2010թ. միջազգային կոնֆերանսի ժամանակ Գերմանիայի կանցլեր Ա.Մերկելը հայտարարել է, որ մուլտիկուլտուրալիզմի քաղաքականությունը Գերմանիայում տապալվել է[2]:

Եվրոպայում բազմամշակութայնության քաղաքականության խնդրայնության դիսկուրսին զուգահեռ՝ ադրբեջանական մեդիայում շրջանառության մեջ են դրվում նյութեր «Ադրբեջանի մուլտիկուլտուրալիզմի մոդել»-ի մասին[3]: 2013-2014թթ. ակտիվանում են որպես մուլտիկուլտուրալ երկիր դիրքավորվելու Ադրբեջանի փորձերը: Դրա մասին են վկայում այս ուղղությամբ իրականացված քայլերը և տեղեկատվական ուղղորդումը: Արհեստականորեն ստեղծված «մուլտիկուլտուրալիզմի ադրբեջանական մոդել»-ը որոշակիորեն հակադրվում է եվրոպական կամ այլ երկրների «ձախողված» մոդելներին: Ադրբեջանում վերջին մի քանի տարիներին մուլտիկուլտուրալիզմը հռչակվել է պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Ըստ ադրբեջանական տեսակետի՝ «*մուլտիկուլտուրալիզմի սեփական մոդելն ավելի կայացած և արդյունավետ է, որ Ադրբեջանը կարող է օրինակ ծառայել ամբողջ աշխարհի համար*»[4]:

Իրականացված քայլեր և միջոցառումներ. «Մուլտիկուլտուրալիզմի ադրբեջանական մոդելի» տարածմանն ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս առանձնակի զարկ տրվեց 2014թ. փետրվարի 28-ին: Ի.Ալիևի հրամանագրով ստեղծվեց ԱՀ ազգամիջյան հարցերի և մուլտիկուլտուրալիզմի և կրոնական հարցերով պետական խորհրդա-

[2] Меркель заявила о провале мультикультурализма, https://www.bbc.com/russian/international/2010/10/101016_merkel_multiculturalism_failed

[3] Ադրբեջանական լրատվական դաշտում վերջին շրջանում հաճախ կարելի է հանդիպել այս թեմայով նյութերի հետևյալ ձևակերպումներով. *«մուլտիկուլտուրալիզմը պետական քաղաքականություն է և կենսակերպ», «Ադրբեջանը չի տեսնում այլընտրանք մուլտիկուլտուրալիզմին», «Ադրբեջանը հնագույն ժամանակներից ի վեր հայտնի է իր տոլերանտությամբ և մուլտիկուլտուրալ ավանդույթներով», «Մուլտիկուլտուրալիզմը վերածվում է պետության բրենդի» և այլն:*

[4] Президент Ильхам Алиев: Азербайджан играет уникальную роль между цивилизациями, религиями и континентами, http://1news.az/news/v-baku-prohodit-konferenciya-2017-god-islamskoy-solidarnosti-religii-i-mezhkul-turnyy-dialog---foto

կանի ծառայությունը: Նույն թվականի մայիսին հիմնադրվեց Բաքվի մուլտիկուլտուրալիզմի միջազգային կենտրոնը: Կենտրոնի անմիջական նախաձեռնությամբ իրականացվում է միջոցառումների լայն շրջանակ՝ տարբեր կառույցների հիմնադրում, հումանիտար և միջազգային ֆորումներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ, մրցույթներ, ցուցահանդեսներ, գրքերի հրատարակություն, ներկայացումներ, ինչպես Ադրբեջանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Բաքվի մուլտիկուլտուրալիզմի միջազգային կենտրոնը տարին երկու անգամ կազմակերպում է ամառային և ձմեռային դպրոցներ, որոնց ընթացքում 30-40 ուսանող տարբեր երկրներից հնարավորություն է ստանում այցելել Ադրբեջան: Այդ դպրոցներն ամեն անգամ անց են կացվում Ադրբեջանի տարբեր շրջաններում: Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ Բաքվի մուլտիկուլտուրալիզմի միջազգային կենտրոնի մասնաճյուղեր են գործում ԱՄՆ-ում, Մոլդովայում, Իսրայելում, Գերմանիայում, Ռուսաստանում, Ղազախստանում:

«Ադրբեջանական մուլտիկուլտուրալիզմ» առարկան դասավանդվում է Ադրբեջանի 38 և արտասահմանյան 19 համալսարաններում՝ Գերմանիայում, Իտալիայում, Չեխիայում, Բելառուսում և այլն: Ադրբեջանական մուլտիկուլտուրալիզմի մոդելին ծանոթանալուց զատ, «...ուսանողներին ներկայացվում են նաև Ադրբեջանի պատմությունը և մշակույթը»: Կրթական ոլորտում, մուլտիկուլտուրալիզմի քաղաքականության շրջանակներում Բաքվի Սլավոնական համալսարանում բացվել է Ադրբեջանական մուլտիկուլտուրալիզմի ամբիոն, իսկ 2017թ. հուլիսին հրատարակվեց համանուն ուսումնական ձեռնարկը:

«Ադրբեջանական մուլտիկուլտուրալիզմը» որպես քարոզչություն. Ադրբեջանում տարբեր ազգերի ներկայացուցիչների բնակության փաստը իշխանությունները ներկայացնում են որպես բացառիկ երևույթ, զուտ Ադրբեջանին բնորոշ հանդուրժողականության դրսևորում: Ադրբեջանական իշխանությունները պաշտոնական ելույթներում նշում են, որ իրենց երկիրը մուլտիկուլտուրալ քաղաքականության դրական փորձ ունի, քանի որ «*երկրում խաղաղ ապրում են ազգային փոքրամասնություններ*[5]*, որոնք ունեն նույն իրավունքները, ինչ տիտղոսակիր ազգը*»[6]:

Որպես ասվածի հիմնավորում ներկայացվում է Բաքվում պահպանված հայկական եկեղեցու փաստը, չնայած հայ-ադրբեջանական հակա-

[5] Ադրբեջանում ապրում են լեզգիներ, ռուսներ, հրեաներ, թալիշներ, թաթեր, ուդիներ և այլն:
[6] http://www.azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_r.pdf

մարտությանը: Ադրբեջանական նյութերից տպավորություն է ստեղծվում, թե հայկական եկեղեցին գործող եկեղեցի է, սակայն չի նշվում, որ այն մի քանի անգամ լուրջ վնասվել է և *բացակայում է գմբեթի խաչը, իսկ 2002 թվականից այն օգտագործվում է որպես Ադրբեջանի նախագահի գործերով վարչության գրադարանի գրապահոց, որի մուտքը փակ է*[7]:

Թեև Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին դրույթներն ամրագրված են ինչպես Ադրբեջանի սահմանադրությունում, այնպես էլ Ադրբեջանի ստորագրած միջազգային համաձայնագրերում (ինչպիսին է, օրինակ՝ Եվրոպայի խորհրդի «*Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան»),* սակայն իրականում այն հաճախ դեկլարատիվ բնույթ է կրում: Քիչ չեն ազգային փոքրամասնությունների իրավունքների սահմանափակման և ոտնահարման օրինակները[8]. երեխաների անունների ընտրությունը պետք է համաձայնեցվի համապատասխան պետական մարմինների հետ, ազգանունները ձևափոխվում են՝ ստանալով «թյուրքական հնչողություն»[9]: Չնայած հռչակված է, որ Ադրբեջանում ապրող բոլոր ազգերը, անկախ էթնիկ ծագումից, ունեն հավասար իրավունքներ, սակայն տարբեր մեթոդներով խոչընդոտվում է փոքրամասնությունների քաղաքական գործունեությունը, օրինակ՝ իրականացվում է կուսակցությունների և կազմակերպությունների գրանցման գործընթացի խոչընդոտում կամ քաղաքական գործիչների ձերբակալություններ այլախոհության մեղադրանքով[10]:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների դրսևորած ցանկացած ակտիվություն, որն ուղղված է մշակութային և լեզվական ինքնության պահպանությանը, ադրբեջանական իշխանությունների կողմից գնահատվում է որպես անջատողականություն: Այսպես, օրինակ, տարրա-

[7] https://armeniasputnik.am/society/20180408/11321545/azerbadjan-surb-grigor-lusavorich-haykakan-ekexeci.html

[8] Այս առումով ավելի մեղմ է վերաբերմունքը ռուսական համայնքի նկատմամբ՝ գործում են ռուսական դպրոցներ:

[9] Азербайджан сегодня: от неравноправия к шовинизму, http://flnka.ru/politika/475-azerbaydzhan-segodnya-ot-neravnopraviya-k-shovinizmu.html
Информвойна против лезгин и талышей, http://flnka.ru/aktualnoe/3109-informvoyna-protiv-lezgin-i-talyshey.html

[10] Տե՛ս Коренные народы Азербайджана: колокол звонит по нам, http://flnka.ru/digest-analytics/1730-korennye-narody-azerbaydzhana-kolokol-zvonit-po-nam.html,
Фахраддин Абосзода: В Азербайджане проводится политика этноцида в отношении коренных народов, http://novostink.ru/azerbaijan/69451-fahraddin-aboszoda-v-azerbaydzhane-provoditsya-politika-etnocida-v-otnoshenii-korennyh-narodov.html#ixzz5G8V26m9M

կան դասարաններում մայրենի լեզվի դասավանդման որոշակի սահմանափակումներ կան. դասագրքերի սղություն, դասավանդող ուսուցիչներն այլ առարկաների ուսուցիչների համեմատությամբ ավելի ցածր են վարձատրվում[11]: Բացի նշված իրավախախտումներից, նաև փոքրամասնությունների թվաքանակի մասին կեղծ տվյալնել են ներկայացվում: Ադրբեջանական իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության մաս են կազմում ազգային փոքրամասնությունների պատմության խեղաթյուրված ներկայացումը, նրանց պատմամշակութային ժառանգության արժեքների յուրացումը[12]: Այսպես, օրինակ, *«Ներկայացուցչություններ չունեցող ազգերի և ժողովուրդների կազմակերպություն»* ՀԿ-ի կողմից 2013թ. սեպտեմբերին Եվրախորհրդարանում ներկայացված զեկույցում նշվում է, որ *«Ադրբեջանում բնակվող լեզգիների թիվն իրականում հասնում է 500-700 հազարի, մինչդեռ պաշտոնական տվյալներում ներկայացվում է մոտ 180 հազ., իսկ լեզգիների մշակութային ժառանգություն հանդիսացող հուշարձանները ներկայացվում են որպես ադրբեջանական»*[13]:

Ըստ էության, մուլտիկուլտուրալիզմը պետական քաղաքականությունից վերածվել է պետական քարոզչության: Մուլտիկուլտուրալ Ադրբեջանի շուրջ կառուցվող քարոզչությունն ուղղված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին լսարաններին: Ներքին լսարանի դեպքում այն նպատակ ունի ամրապնդել ադրբեջանականության գաղափարախոսությունը, որի հիմքում ոչ թե էթնիկ ծագումն է, այլ քաղաքացիական արժեքները:

Արտաքին լսարանի դեպքում Ադրբեջանը փորձում է ստանձնել իսլամական և քրիստոնեական աշխարհների միջև այսպես կոչված կամրջի դերը՝ ձգտելով դառնալ քաղաքակրթությունների երկխոսության պլատֆորմ, հանդես գալ որպես «*ոչ միայն նավթ և գազ, այլ «տոլերանտության գաղափարներ արտահանող» պետություն*»[14]: Այս քաղաքականության ամրապնդմանն ուղղված քայլերից էին, օրինակ, 2016 թվականը Ի.Ալիևի կողմից որպես «*Մուլտիկուլտուրալիզմի*», իսկ 2017թ. «*Իսլամական համերաշխության*» տարի հայտարարելը և համապատասխան միջոցառումների անցկացումը: Մուլտիկուլտուրալիզմի ադրբեջանական մոդելի

[11] Азербайджан сегодня: от неравноправия к шовинизму, http://flnka.ru/politika/475-azerbaydzhan-segodnya-ot-neravnopraviya-k-shovinizmu.html
[12] http://flnka.ru/aktualnoe/3109-informvoyna-protiv-lezgin-i-talyshey.html
[13] *Фахраддин Абосзода*: В Азербайджане проводится политика этноцида в отношении коренных народов, http://novostink.ru/azerbaijan/69451-fahraddin-aboszoda-v-azerbaydzhane-provoditsya-politika-etnocida-v-otnoshenii-korennyh-narodov.html#ixzz5G8V26m9M
[14] http://www.1news.az/news/v-baku-izdana-kniga-o-modeli-azerbaydzhanskogo-mul-tikulturalizma-foto

շուրջ կառուցվող քարոզչությունն ուղղված է նաև սեփական երկրի ցանկալի կերպարի ստեղծմանը, միջազգային վարկի բարձրացմանը, այդպիսով նաև ԼՂ հակամարտության կարգավորման գործում միջազգային աջակցության ապահովմանը: Այն ուղեկցվում է Հայաստանը վատ լույսով ներկայացնելու փորձերով, մասնավորապես՝ գրեթե բոլոր միջոցառումների ժամանակ հնչում են *«ինչպես ադրբեջանական, այնպես էլ այլ ժողովուրդների դեմ «կատարած հանցանքներում»* հայությանն ուղղված մեղադրանքներ: Օրինակ, 2016թ. հունիսին Բաքվի մուլտիկուլտուրալիզմի միջազգային կենտրոնում տեղի ունեցավ *«Տեռոր մուլտիկուլտուրալիզմի դեմ»* խորագրով միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին ԱՄՆ, Ֆրանսիայի, Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի ներկայացուցիչներ: Գիտաժողովի ընթացքում ադրբեջանական կողմը հանդես է եկել հայտարարությամբ, որ *«հայկական ահաբեկչությունը կրում է համակարգային բնույթ և ուղղված է համայն մարդկության դեմ»*, ինչել են *«այլ ժողովուրդների դեմ «կատարած հանցանքներում հայությանն ուղղված մեղադրանքներ»*: Այս համատեքստում է Ադրբեջանը հանդես եկել *«հայ ահաբեկիչներից մարդկությանը պաշտպանողի» և «համամարդկային արժեքների պահապանի»* դիրքերից[15]:

Այսպիսով, բազմամշակութայնություն անվան տակ իրականացվող տարաբնույթ միջոցառումները՝ սեմինարներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, կայքերի գործարկում, գրքերի հրատարակում, համերգներ[16] և այլն, ծառայում են ադրբեջանական տեսակետների տարածմանը և հակահայկական քարոզչությանը: Նշենք, որ նման քարոզչությունը վտանգ է ներկայացնում Հայաստանի և հայության համար, քանի որ առկա է հնարավորինս մեծ լսարանում բացասական, հայատյաց պատկերացումներ ձևավորելու միտում:

[15] Состоялся первый международный «круглый стол» на тему «Армянский террор и азербайджанский мультикультурализм», https://azertag.az/ru/xeber/Sostoyalsya_pervyi_mezhdunarodnyi_kruglyi_stol_na_temu_Armyanskii_terror_i_azerbaidzhanskii_multikulturalizm-966144

[16] 2013թ. նոյեմբերի 22-ին Փարիզի Ադրբեջանի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ «Ադրբեջան. տոլերանտության տարածություն» ֆոտոցուցահանդեսը: 2016թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունցավ «Ադրբեջանական մուլտիկուլտուրալիզմ» կայքի և էլեկտրոնային գրադարանի շնորհանդեսը: 2017թ. ապրիլի 27-ին Հելսինկիում տեղի ունեցավ «Մուլտիկուլտուրալիզմ և կրոնական հանդուրժողականություն. Ադրբեջանի փորձը և դրա նշանակությունը Եվրոպայի համար» խորագրով կոնֆերանս: 2018թ. հունվարին Բաքվի մուլտիկուլտուրալիզմի միջազգային կենտրոնում տեղի ունեցավ «Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևը մուլտիկուլտուրալիզմի ադրբեջանական մոդելի մասին» գրքի շնորհանդեսը: 2018թ. մայիսին Ադրբեջանի Լեզվաբանական համալսարանում լույս տեսավ «Հեյդար Ալիև. մուլտիկուլտուրալիզմ, տոլերանտության գաղափարախոսություն» գիրքը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վահրամ Հովյան[*]

Թուրքիայի հայ համայնքը ներկայում կանգնած է մի շարք լրջագույն մարտահրավերների առջև։ Տասնամյակներ շարունակ հոգևոր և ֆիզիկական անվտանգությանը սպառնացող վտանգները հանգեցրել են այդ երկրում հայության թվաքանակի աղետալի նվազմանը։ Այս երևույթը, առհասարակ բնորոշ լինելով Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներին, ուղղակիորեն հանգեցնում է վերջիններիս թուլացմանն ու կազմալուծմանը։ Եթե 1960-ական թթ. Թուրքիայի հայության թվաքանակը կազմում էր մոտ 200 հազար մարդ, ապա 21-րդ դարի սկզբին այն հաշվվում է մոտ 80 հազար։ Համայնքի սպառման գործընթացը, ցավոք, շարունակվում է և չկանգնելու դեպքում կհանգեցնի վերջինիս իսպառ վերացմանը։ Իսկ դա իր բացասական հետևանքները կունենա բովանդակ հայության համար՝ նվազագույնը երկու առումով։ Նախ՝ ծանր հարված կհասցվի արևմտահայ քաղաքակրթությանը, քանի որ առկա բոլոր խնդիրներով հանդերձ, Թուրքիայի հայությունը, մասնավորապես՝ Կ.Պոլսի հայ համայնքը, եղել և մնում է արևմտահայ մշակութաստեղծ հանրույթ.

- այստեղ լույս են տեսնում երեք հայալեզու թերթեր («Ժամանակ», «Նոր Մարմարա», «Ակոս»), որոնց էջերում ոչ միայն պահպանվում, այլև զարգանում է արևմտահայերենը։ Այնտեղ, բացի լուրերից, հրատարակվում են նաև հրապարակախոսական, գրական և այլ ժանրի նյութեր;
- Կ.Պոլսում, չնայած բազմաթիվ դժվարություններին, շարունակում է ծաղկել արևմտահայ գրականությունը։ Անցյալի գրողների ստեղծագործությունների հետ մեկտեղ հրատարակվում են նաև ժամանակակից պոլսահայ գրողների երկերը, ինչը նշանակում է, որ առկա է կեն-

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ։

սունակ գրական հայ համայնք, որին էլ պատկանում է ներկա բարդ ժամանակներում արևմտահայ գրականության զարգացման առաքելությունը;

- Կ.Պոլսում արևմտահայերենով հրատարակվում է նաև հայագիտական գրականություն, ինչը վկայում է այն մասին, որ այնտեղ առկա է ոչ միայն մշակութային, հրապարակախոսական, գրական, այլև գիտական հայ կյանք;
- Թուրքիայում շարունակում է կենսունակ մնալ նաև հայկական մշակույթը: Գործում են արվեստի և մշակույթի բազմաթիվ ստեղծագործական խմբեր, որոնք ապահովում են այդ երկրի հայության մշակութային կյանքը:

Առհասարակ, Կ.Պոլիսը, նախքան ցեղասպանությունը, եղել է արևմտահայ հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի կենտրոնը: Ներկայում էլ այն, թերևս՝ իներցիայի ուժով, շարունակում է այդ ավանդույթները: Պատահական չէ, որ քաղաքում գործում է «Արաս» հայկական տպարանը, ինչը ևս մեկ անգամ վկայում է այնտեղ հայ գրչության առկայության մասին:

Մի խոսքով, չնայած թվաքանակի նվազմանը՝ գրական, գիտական, մշակութային կյանքը Թուրքիայի հայ համայնքում շարունակվում է և դրանով իսկ շարունակում է սնուցել արևմտահայ (նաև հայկական՝ առհասարակ) քաղաքակրթությունը: Մինչդեռ համայնքի սպառումը սպառնում է վերջ տալ նաև այդ կյանքին, ինչը լրջագույն հարված կլինի թե՛ Սփյուռքին և թե՛ հայությանն ընդհանրապես:

Երկրորդ խնդիրը, որը կապված է Թուրքիայի հայության սպառման հետ, Կ.Պոլսի հայոց պատրիարքության ճակատագիրն է: Նման սցենարի դեպքում Հայ Առաքելական եկեղեցու չորս նվիրապետական աթոռներից մեկը կհայտնվի «առանց հոտի մնացած հովվի» կարգավիճակում: Թուրքիան հայության վիճակի տեսակետից կնմանվի Հնդկաստանին, որտեղ կան հայկական եկեղեցիներ, կալվածքներ, սակայն չկա համայնք:

Տնտեսական դժվարությունները և դրանց հետևանքները

Թուրքիայի հայ համայնքին ընդհանուր առմամբ բնորոշ են Սփյուռքի, մասնավորապես, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների առջև

ծառացած մարտահրավերները։ Այնուամենայնիվ, հայությունն այստեղ ունի նաև տեղական առանձնահատկություններից բխող խնդիրներ։ Դրանց մի մասն ունի, օրինակ, կազմակերպչական բնույթ, ինչպիսիք են ներկա պահին նոր պատրիարքի ընտրության անհնարինությունը, Կ.Պոլսի թաղային խորհուրդների ընտրության անհնարինությունը, հոգևոր կրթություն ստանալու անհնարինությունը։

Հայ համայնքի դիմագրաված դժվարությունների շարքում կարևոր տեղ ունեն նյութական (ֆինանսական) խնդիրները։ Վերջիններս բացասաբար են անդրադառնում հատկապես կրթական հաստատությունների գործունեության վրա, որոնք պարբերաբար կանգնում են բյուջեի սղության (երբ ծախսերը գերազանցում են առկա հնարավորությունները) խնդրի առջև՝ ստիպված լինելով բացը լրացնել հանգանակությունների միջոցով։

Չնայած վերջին շրջանում Թուրքիայի դիմագրաված տնտեսական դժվարություններին, սույն խնդիրը մեծ հաշվով պայմանավորված է համայնքային գույքի օգտագործման սահմանափակ հնարավորություններով։ Բացի այն, որ եկեղեցական գույքի մեծ մասը շարունակում է բռնագրավված մնալ պետության կողմից, կան նաև առարկայական և ենթակայական խոչընդոտներ համայնքի տրամադրության տակ եղած կալվածքների շահագործման առումով։ Մինչդեռ դրանց օգտագործումը (հիմնականում՝ վարձակալության հանձնումը) մեծ եկամուտների աղբյուր է համայնքային կառույցների համար։

Վերջերս նման խնդրի առջև է կանգնել Կ.Պոլսի Սամաթիայի Թաղային խորհուրդը։ Վագըֆների տնօրինության կողմից այն որպես նվիրատվություն ստացել է ընդարձակ հողատարածք։ Սակայն այն հայտարարված է կանաչ գոտի, որտեղ արգելվում է որևէ շինարարություն իրականացնել։ Մինչդեռ այդ հողատարածքի վրա կառուցված շենքերի վարձակալության հանձնումը կարող էր նշանակալի եկամուտներ բերել խորհրդին։ Ստացվում է, որ, մի կողմից, նվիրաբերելով ընդարձակ հողատարածք Սամաթիայի Թաղային խորհրդին, պետությունը, մյուս կողմից, թույլ չի տալիս դրա միջոցով եկամուտներ ապահովել։ Թուրքական դատական համակարգի բոլոր ատյաններով անցնելուց հետո Թաղային խորհուրդը ներկայում խնդիրը վիճարկում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում[1]։

[1] Սամաթիա այս կիրակի կը բանա մատաղօրհնութիւններու եղանակը, Նոր Մարմարա, հոկտեմբերի 26։

Վերջին շրջանում որոշ արդյունքներ նկատվում են բռնագրավված եկեղեցական գույքի վերադարձման հարցում: Նախորդ հոդվածում խոսվել է Թուրքիայի Վճռաբեկ դատարանի կողմից Սանասարյան տան շենքի նկատմամբ Կ.Պոլսի Հայոց պատրիարքության սեփականության իրավունքը ճանաչելու մասին[2]: Վերջերս գրանցված մեկ այլ հաղթանակ է վեցամյա դժվարին պայքարից հետո Օրթագյուղի Թաղային խորհրդի կողմից ընդարձակ հողատարածքի՝ դատական կարգով հետ ստացումը Թուրքիայի պաշտպանության նախարարությունից: Մեկ թաղամասի չափ տարածք ընդգրկող այդ հողամասը Թաղային խորհուրդը նպատակադրվել է կառուցապատել, այնուհետև՝ շենքերի վարձակալության միջոցով եկամուտներ ապահովել համայնքի համար[3]:

Չնայած հայ համայնքային կառույցներին հաջողվում է վերադարձնել բռնագրավված համայնքային գույքի որոշ մասը, սակայն այս հարցում իրավիճակը հեռու է բավարար լինելուց: Նախ՝ հսկայական թվով կալվածքներ, ինչպես վերը նշվեց, դեռևս շարունակում են մնալ բռնագրավված, դրանց վերադարձի հեռանկարներն անորոշ են: Բացի այդ, ինչպես ցույց են տալիս գույքի վերադարձման սակավաթիվ օրինակները, վերադարձման գործընթացը տևական է և դժվարին, իսկ ավելի ճիշտ՝ տանջալից: Դատական քաշքշուկները ձգվում են տարիներով: Պատահական չէ, որ խնդիրները լուծում են ստանում դատական համակարգի ամենավերին ատյաններում՝ վճռաբեկ դատարանում կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

Նախորդ հրապարակումներում մատնանշվել են թուրքական պետության կողմից եկեղեցական գույքի վերադարձման հարցում համակարգված կերպով հարուցվող խոչընդոտները, որոնցից մեկն էլ բարդ ու տևական դատական գործընթացներն են[4]: Եթե Թուրքիայի իշխանություններն անկեղծ են հայ համայնքին իրենից բռնագրաված գույքը վերադարձնելու հարցում, ապա դրա համար կան շատ ավելի դյուրին իրավական ուղիներ, օրինակ՝ նվիրատվությունը կամ խորհրդանշական

[2] Տե՛ս *Հովյան Վ.,* Թուրքիայի հայ համայնքի ներկա դրության շուրջ, «Գլոբուս», 2018, թիվ 7, էջ 11:

[3] Տե՛ս Օրթագիւղի Թաղային Խորհուրդի երէկուան մամլոյ ասուլիսը, Նոր Մարմարա, սեպտեմբերի 26, 2018թ.:

[4] Տե՛ս *Հովեան Վ.,* Եկեղեցական գոյքի վերադարձման խնդիրը՝ որպէս հայոց պահանջատիրութեան բաղկացուցիչ, «Հայկազեան հայագիտական հանդէս», հատոր ԼԵ (35), Պէյրութ, 2015, էջ 611-614:

գներով վաճառքը։ Այս իրավական ուղիների անտեսումն ու խնդրի լուծման երկարաձգումը տևական դատական և բյուրոկրատական քաշքշուկների միջոցով վկայում են այն մասին, որ թուրքական իշխանությունների կողմից հռչակված հայկական (և ընդհանրապես՝ քրիստոնեական) եկեղեցական գույքի վերադարձման քաղաքականությունը շարունակում է կրել հիմնականում ձևական բնույթ՝ նպատակ հետապնդելով աշխարհին ցույց տալ Թուրքիայի՝ իբրև «ժողովրդավարական» և իր (կրոնական) փոքրամասնությունների մասին «հոգ տանող» պետության նկարագիրը։

Ինչևէ, նյութական դժվարությունները լրացուցիչ պառակտման աղբյուր են հանդիսանում Թուրքիայի հայության համար։ Առաջանում է սոցիալական բևեռացում Կ.Պոլսի հայկական համայնքների միջև։ Հարուստ թաղամասերը կարողանում են լուծել իրենց խնդիրները և որոշ չափով օգնել նաև աղքատներին։ Մինչդեռ աղքատ թաղամասերը շարունակաբար տառապում են նյութական անբավարարությամբ։

Սույն խնդիրը հաղթահարելու համար պոլսահայության շրջանում առաջ է քաշվել միասնական բյուջե ունենալու գաղափարը, որն ընդհանուր առմամբ հանգում է հետևյալին. բոլոր հայկական թաղային խորհուրդների եկամուտները պետք է ի մի բերվեն և տնօրինվեն պատրիարքարանի կողմից, որպեսզի վերջինս կարողանա բավարարել բոլոր համայնքային կառույցների կարիքները։

Այս գաղափարը, սակայն, շահերի բախում է առաջացնում հարուստ և աղքատ թաղային խորհուրդների միջև։ Աղքատներին ձեռնտու է օգտվել ընդհանուր բյուջեի հնարավորություններից։ Մինչդեռ հարուստները չեն ցանկանում կիսել իրենց եկամուտները աղքատ թաղամասերի հետ և զրկվել դրանք սեփական հայեցողությամբ տնօրինելու հնարավորությունից։ Այս հակասությունը ցայտուն կերպով դրսևորվում է 10 տարի առաջ Կ.Պոլսում հիմնված Համայնքային կառույցները միավորող խորհրդի աշխատանքներում։ Վերջինս, համակարգված աշխատանքի հարթակ լինելու փոխարեն, ավելի շատ հանդես է գալիս որպես անառողջ բանավեճերի ակումբ՝ այն աստիճան, որ կասկածի տակ է դրվում անգամ նրա գոյության անհրաժեշտությունը։

ՀՈՒՄ ՆԱՎԹԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Արա Հ. Մարջանյան[*]

Նախաբան

Իսրայելի նավթային ոլորտը ամենաանթափանցներից է աշխարհում՝ այս հարցում գերազանցելով նույնիսկ Ադրբեջանին[1]: Նավթամատակարարումների *սկզբնաղբյուրների* և աշխարհագրության մասին վիճակագրական տվյալներն Իսրայելում տասնամյակներ շարունակ հանդիսանում են գաղտնիք և չեն ներկայացվել ու չեն ներկայացվում պաշտոնական հաշվետվություններում: Բաց աղբյուրներում առկա են միայն հում նավթի (*crude petroleum*) և վերամշակված նավթամթերքների (*refined petroleum*) տարեկան ներկրումների *ծավալների* (բնեղեն ու ֆինանսական չափողականությամբ) մասին ընդհանրական տվյալները, որոնց գնումը Իսրայելում իրականացնում է մեկ միասնական պետական ընկերություն: Եվ անգամ այս սակավաթիվ և ոչ ամբողջական տվյալների *արժանահավատության* հարցը քանիցս բարձրացվել է խնդրով զբաղվող մի շարք մասնագիտական կառույցների կողմից:

Այսօրինակ իրավիճակը, փորձագիտական հանրության կարծիքով, պայմանավորված է երկու գործոնով: Նախ՝ հում նավթի և նավթամթերքների ներկրումների գործարքների շոշափելի մասն Իսրայելն իրականացնում է օֆշորային գոտիների միջոցով, ինչն էականորեն բարձրացնում է դրանց անթափանցությունը: Այսպես, պաշտոնական վիճակագրական հաշվետվություններում նշվում է ավելի քան 150 մասնավոր նավթ ներկրող կազմակերպություն, որոնց ինքնությունը և գործունեության այլ մանրամասներ գաղտնիացված են: Բացի այդ, ներկրումների մի այլ մասն էլ

[*] «Նորավանք» ԳԿՀ գիտության գծով փոխտնօրեն, էներգետիկայի գծով ՄԱԿ ազգային փորձագետ, տ.գ.թ.:

[1] Այս առումով Իսրայելի և Ադրբեջանի (ու Թուրքիայի) միջև ուշագրավ նմանությունն առկա է նաև ժողովրդագրական վիճակագրության ոլորտում, մանավանդ՝ բնակչության էթնոլեզվական կառուցվածքի հարցում:

Իսրայելն իրականացնում է տարատեսակ վերաներկրումային սխեմաներով (*re-export, реэкспорт*) նավթ արդյունաբերող այն երկրներից, որոնք չեն ցանկանում հրապարակայնացնել Իսրայելի հետ իրենց կապերը [1]:

Ստորև օգտագործվել են Իսրայելի Վիճակագրագան բյուրոյի (ԻՎԲ)[2], Իսրայելի Արտահանումների և միջազգային համագործակցության ինստիտուտի (ԻԱՄՀԻ, *IEICI*)[3] պաշտոնական հաշվետվությունները, *BP* ընկերության տարեգրքերը, Տնտեսության բարդության դիտարանի (ՏԲԴ, *OEC*)[4], Էներգետիկ միջազգային գործակալության (ԷՄԳ, *IEA*), ԱՄՆ Էներգետիկ տեղեկատվության վարչության[5] (ԷՏՎ, *EIA*) և ԱՄՆ ԿՀՎ (*US CIA*)[6] տվյալների առցանց գրադարանները, ինչպես նաև բաց մամուլի որոշ հրապարակումներ: Բոլոր դիտումները՝ առ 2018թ. սեպտեմբեր:

1. Հում նավթի սեփական պաշարները և արդյունահանումը

Իսրայելում հում նավթի արդյունաբերական նշանակության սեփական[7] պաշարները, ամենայն հավանականությամբ, բացակայում են: *BP* ընկերության վերջին երկու տասնամյակների տարեգրքերն Իսրայելում հում նավթի ապացուցված պաշարների (*proved reserves*) մասին որևէ տեղեկություն չեն բերում[8]: Չի ներկայացվում նաև Իսրայելում հում նավթի սեփական արդյունահանման մասին որևէ տվյալ: Միևնույն ժամանակ, համաձայն *IEA* տվյալների՝ 2016-ին Իսրայելում արդյունահանվել է մոտ 115 հազ. տ հում նավթ: Նկար 1-ում ամբողջացնում ենք Իսրայելում հում նավթի և նավթային այլ հումքի (*feedstock, сырье*) արդյունահանման մասին *IEA* առցանց գրադարանի բոլոր տվյալները՝ հասանելի 2018թ. սեպտեմբերի դրությամբ:

[2] הלשכה המרכזית לסטטיסטיקה, *ЦСБ Израиля*

[3] Israel Export and International Cooperation Institute. https://www.export.gov.il/

[4] The Observatory of Economic Complexity, https://atlas.media.mit.edu/en/visualize/tree_map/hs92/import/

[5] The U.S. Energy Information Administration, https://www.eia.gov/beta/international/analysis.php?iso=ISR

[6] U.S. Central Inteligence Agency, World Factbook.

[7] Սեփական պաշարներ ասելով նկատի են առնվում միայն հում նավթի այն պաշարները, որոնք գտնվում են Իսրայելի միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Հետևաբար, ստորև դիտարկումներից դուրս է գտնվում Սինայի թերակղզում, Հոլանի բարձունքներում և Պաղեստինի Արևմտյան հատվածում գտնվող պաշարների դիտարկումը, ինչպես նաև Իրաքյան Քրդստանից և Իրաքի ու Սիրիայի այլ վայրերից հում նավթի մաքսանենգ ներկրումներն Իսրայել: Դրանք կդիտարկվեն Իսրայելի նավթին նվիրված մեր ավելի ծավալուն հոդվածում:

[8] *BP* տարեգրքերի այս բաժնում դիտարկվում են աշխարհի միայն այն երկրները, ուր առկա է 0.5 մլն տ և ավելի ծավալով հում նավթի սեփական արդյունահանում:

Նկար 1.

Հում նավթի և նավթային հումքի արդյունահանումը Իսրայելում, հազ. տ (աղբյուրը՝ IEA)



Ինչպես տեսնում ենք, 1990-2016թթ. Իսրայելում շոշափելի ծավալներով առկա էր միայն նավթայի (*naphtha, нафта*)[9] և հեղուկացված նավթագազի (*liquefied petroleum gas, сжиженный нефтегаз*)[10] սեփական արդյունահանում: 2016-ին դրանց ծավալները կազմել էին մոտ 1.1 մլն տ և 0.354 մլն տ համապատասխանաբար: Դիտարկվող ժամանակահատվածում նավթայի առավելագույն արդյունահանումն արձանագրվել է 2014-ին՝ 1.27 մլն տ, հեղուկացված նաթագազինը՝ 2011-ին, մոտ 0.57 մլն տ: 1993-99թթ. առկա էր նաև բնական գազի կոնդենսատային հեղուկի (ԲԳՀ, *LNG*) չնչին քանակությամբ արդյունահանում:

Թեև հում նավթի սեփական պաշարների որոնմանն ու արդյունահանմանն ուղղված աշխատանքներն Իսրայելում ձեռնարկվել էին դեռ երկրի կազմավորման սկզբից (1948թ.), սակայն նկատելի ծավալներով հում նավթի սեփական արդյունահանումն Իսրայելում մեկնարկում է

[9] Նավթային հումք՝ նախատեսված նավթաքիմիայի (էթիլենի կամ արոմատիկ նյութերի արտադրություն) կամ բենզինի արտադրության համար՝ ռիֆորմինգի կամ իզոմերիզացիայի միջոցով:
[10] Թեթև հագեցած պարաֆինային ածխաջրածիններ՝ բաղկացած հիմնականում պրոպանից (C_3H_8) և բուտանից (C_4H_{10}): Ստացվում է հում նավթի կամ բնական գազի վերամշակումից:

միայն 2013-ից (63 հազ. տ)՝ 2016-ին հասնելով 115 հազ. տոննայի (տե՛ս Նկ. 1): Հավանաբար, այն հիմնականում արդյունահանվել է «*Givot olam oil Ltd*» ընկերության[11] կողմից շահագործվող Մեգեդ նավթադաշտից (*Meged oil fied*)՝ Մեգեդ-5 հորատման հարթակից: Իսրայելի կենտրոնական մարզում, Հորդանան գետի Արևմտյան հատվածի սահմանին գտնվող այս նավթադաշտի հում նավթի պաշարները գնահատված են մոտ 200 մլն տ (մոտ 1.5 մլրդ բարել): Համեմատության համար նշենք, որ 2016-ին հում նավթի սպառումն Իսրայելում, համաձայն *IEA* տվյալների, կազմել էր 10.3 մլն տ (տե՛ս ստորև՝ Նկ. 2-ում): Այսինքն՝ այդ տարի հում նավթի սեփական արդյունահանումը կազմել էր սպառման ընդամենը 0.61%-ը: Այսպիսի իրադրությունը գրեթե անփոփոխ պահպանվում է դեռ անցած դարի 50-ականներից. **հում նավթի սպառման տեսանկյունից Իսրայելը գրեթե ամբողջովին կախված է եղել, մնում է կախված և առաջիկա 3-5 տարիներին կշարունակի մնալ կրիտիկականորեն կախված հում նավթի ներկրումներից:**

Տարատեսակ, հիմնականում իսրայելական ծագում ունեցող աղբյուրների և հրապարակումների համաձայն՝ Իսրայելի հում նավթի հեռանկարային պաշարները կազմում են մոտ 4.2 մլրդ բարել (մոտ 560 մլն տ): Ակնկալվում է, որ Միջերկրական ծովի Իսրայելի արդյունաբերական իրավասության հատվածում գտնվող «Լևիաֆան» գազակոնդենսատային դաշտի տակ գտնվում է մոտ 1.5 մլրդ բարել հում նավթի պաշար: Եվս մոտ 1.4 մլրդ բարել կարող է գտնվել Հայֆա նավահանգստից արևմուտք գտնվող «Պելաջիկ» (*Pelagic gas and oil field*) նավթագազային հանքադաշտում[12]: Բացի այդ, Իսրայելի թերթաքարային նավթի (*shale oil, сланцевая нефть*) պաշարները գնահատվում են մոտ 250 մլրդ բարել, ինչը համադրելի է Սաուդյան Արաբիայի հետախուզված նավթի ողջ պաշարների հետ[13]: Սակայն կրկնենք. Իսրայելում հում նավթի **ապացուցված** պաշարների մասին հավաստի տեղեկություններ մինչ օրս չեն հրապարակվել:

[11] http://www.givot.co.il/About.aspx?l=2&id=78. Իսրայելի կենտրոնական մարզում, Հորդանան գետի Արևմտյան հատվածի սահմանին գտնվող այս նավթադաշտի հում նավթի պաշարները գնահատված են մոտ 200 մլն տ (մոտ 1.5 մլրդ բարել): Հորդանանից այս տարածքը Իսրայելը զավթել էր 1967թ. 6-օրյա պատերազմի արդյունքներով: 1988-ին Հորդանանը հրաժարվեց դրա նկատմամբ հավակնությունից հօգուտ ապագա Պաղեստինի հանրապետության:

[12] https://en.globes.co.il/en/article-1000753681

[13] 2011-ի մայիսին ռուսական *Inter RAO* ընկերությունը հայտարարեց, որ ստացել է Նեգևի անապատում թերթաքարային նավթի արդյունահանման արտոնագիր: Պլանավորվում էր նավթարդյունահանող գործարանի և 150 ՄՎտ հզորությամբ էլեկտրակայանի կառուցում: Արտոնագիրն անվավեր ճանաչվեց 2012թ. ապրիլին արտոնագրային ժամկետի լրացման և դրա չնորացման հետևանքով, https://www.kommersant.ru/doc/1645750

2. Հում նավթի ներկրումը և սպառումը

Համաձայն *IEA* տվյալների, վերջին 26 տարիների ընթացքում հում նավթի տարեկան ներկրումներն Իսրայել տատանվել են 8.3-12.1 մլն տոննա տիրույթում: Նկար 2-ում ամբողջացրել ենք այդ տվյալները գրաֆիկի տեսքով: 9.0 մլն տ ծավալից քիչ տարեկան ներկրումներ արձանագրվել են 1990, 1991 և 2007թթ., իսկ առավելագույն արժեքները՝ 1993-ին (12.092 մլն տ) և 1998-ին (12.147 մլն տ): Ընդհանուր առմամբ, նկատելի է ներկրումների ծավալների նվազման միտում 1992-2007թթ. ժամանակահատվածի համար (*slope* = -0.1556) և դրանց աճի միտում՝ 2007-2015թթ. համար (*slope* = +0.2235): 2016-ին հում նավթի ներկրումները նախորդ տարվա համեմատ նվազել են մոտ 1.4 մլն տոննայով:

Նկար 2.

Հում նավթի ներկրումներն Իսրայել, մլն տոննա: Աղբյուրը՝ IEA, սեփական հաշվարկներ



Ինչպես տեսնում ենք Նկ. 2-ից, մինչ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի թողարկումը (2006թ. հուլիս) և Կասպիցի Ազերի-Չիրագ-Գյունեշլի նավթադաշտի հիմնական նավթի յուրացման փուլի մեկնարկը, հում նավթի սպառումն Իսրայելում անշեղորեն իջնում էր: **Այս միտումը հնարավոր եղավ շրջել միայն Իսրայել - Ադրբջան և Ղազախստան** (տե՛ս ստորև) **հում նավթի ներկրումների ծավալուն մեկնարկից հետո:**

ԻԱՄՀԻ տվյալներով, հում նավթի և նավթամթերքների ներկրումները գումարային առումով կազմում են երկրի ողջ ներկրումների 17-20%-ը:

Ընդ որում, դրանց 60%-ից ավելին բաժին է ընկնում հում նավթի ներկրումներին:

Իսրայելում հում նավթի ռազմավարական պաշարների մասին որևէ հավաստի տվյալի բացակայության հետևանքով ընդունվում է, որ հում նավթի ներկրումների 100%-ը ծախսվում է այդ տարի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայում Իսրայելում գրեթե բացակայում է սեփական հում նավթի արդյունահանումը, կարելի է ընդունել, որ հում նավթի սպառումն Իսրայելում համընկնում է դրա ներկրումների հետ: Այլ խոսքերով, **Իսրայելի կախվածությունը հում նավթի ներկրումներից 1990-2015թթ. կազմում էր 100%:** Մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ նման իրավիճակը պահպանվում է և ներկայում:

3. Վերամշակում

Համաձայն ԱՄՆ ԷՏՎ տվյալների[14], Իսրայելում առկա է հում նավթի վերամշակման երկու գործարան, գումարայինը մոտ 300 հազ. բ.օ. հում նավթի մշակման հզորությամբ: Դրանք տեղակայված են Հայֆայում (մոտ 200 հազ. բ.օ.) և Աշդոդում (100 հազ. բ.օ., 2013-ին իրականացված վերակառուցումից հետո): Նկ. 3-ում պատկերված են Իսրայելի 2007-17թթ. նավթամշակման ոլորտի դինամիկան արտացոլող կորերը՝ կառուցված *BP 2018* տարեգրքի տվյալների վրա: Ինչպես տեսնում ենք, նավթամշակող տեղակայված հզորությունն Իսրայելում աճել է 2007թ. 272 հազ. բ.օ. ցուցանիշից մինչև 301 հազ. բ.օ. 2017-ին: Միևնույն ժամանակ, վերամշակված նավթամթերքի արտադրությունն աճել է 2007թ. 189 հազ. բ.օ. ցուցանիշից մինչև 224 հազ. բ.օ. 2017-ին (տե՛ս Նկ. 3, ձախ առանցք):

Ընդ որում, հում նավթի վերամշակման տեղակայված հզորությունների օգտագործման գործակիցը (տ.հ.օ.գ., %)[15]՝ հաշվարկված *BP 2018* տվյալների հիման վրա, 2017-ին կազմել է 74.4% (Նկ. 3, աջ առանցք): Իր առավելագույն ցուցանիշներին (78-81%) տ.հ.օ.գ.-ը հասել է 2008-2010թթ., երբ Իսրայելի նավթավերամշակման հզորությունները գործել են իրենց հնարավորությունների գրեթե եզրին: Նկատենք, որ Գազայի հատվածում

[14] https://www.eia.gov/beta/international/analysis.php?iso=IS

[15] Այն արտացոլում է տեղակայված հզորությունների օգտագործման արդյունավետությունը: Դրա 100% արժեքը համարժեք է նրան, որ տվյալ տարում այս հզորություններն օգտագործվել են իրենց ողջ տեղակայված հզորությամբ և ողջ տարվա ընթացքում (8760 ժամ): Համապատասխանաբար, 2017թ. տ.հ.օ.գ. 74.4% ցուցանիշը համարժեք է նրան, որ վերամշակող հզորություններն իրենց ողջ տեղակայված հզորությամբ այդ տարի աշխատել են կամ 6517 ժամ (տարվա 74.4%), կամ դրանք աշխատել են ավելի նվազ հզորությամբ, սակայն ավելի երկար ժամանակ:

իսրայելական բանակի «Զուլածո կապար» գործողությունը[16] սկսվեց 2008թ. դեկտեմբերի 27-ին (ցամաքային ռազմուժի ներխուժումը՝ 2009թ. հունվարի 3-ին), իսկ ակտիվ գործողություններն ավարտվեցին 2009թ. հունվարի կեսերին:

Սկսած 2011-ից՝ հում նավթի վերամշակման տ.հ.օ.գ. արժեքը նվազում է մինչև մոտ 74% ու 2011-17թթ. տատանվում այդ արժեքի մոտակայքում՝ կրկին աճելով միայն 2015-ին՝ մինչև 78.4% ցուցանիշ (տե՛ս Նկ 3-ում, աջ առանցք): Հիշեցնենք, որ 2015թ. հունվարից սրվեց Իսրայելի ռազմական առճակատումը Լիբանանի և Սիրիայի տարածքում գտնվող *«Հեզբոլլահ»* կուսակցության ուժերի հետ: Այդ տարվա ընթացքում Իսրայելի օդուժն իրականացրեց Լիբանանի և Սիրիայի տարածքների առնվազն 6 մասշտաբային հրթիռակոծում:

Նկար 3.

Հում նավթի վերամշակման տեղակայված հզորությունը և արտադրանքը (ձախ առանցք, հազ. բ. օ.) և վերամշակման տեղակայված հզորությունների օգտագործման գործակիցը (տ.հ.օ.գ., աջ առանցք, %): Աղբյուրը՝ BP 2018, սեփական հաշվարկներ



Ավելին, համաձայն որոշ հրապարակումների, սկսած 2014-ի կեսերից՝ Իսրայելում լրջորեն դիտարկվում էր ցամաքային և այլ ռազմուժերի խոր թափանցման խոշորամասշտաբ ցամաքային գործողություն՝ Լիբանանի հարավային տարածքներում տեղակայված *«Հեզբոլլահ»* կուսակ-

[16] *Операция «Литой свинец», Operation "Cast Lead"*.

ցության ռազմական ուժերի և ենթակառուցվածքների դեմ [2]: Հետագա գործընթացների արդյունքում այս ծրագիրը չիրագործվեց, և առաջնայնությունը տրվեց այլընտրանքային մարտավարությանը՝ իսրայելական օդուժի կետային հարվածներին: Սիրիայի տարածքում դրանք շարունակվում են մինչ օրս[17]:

Ներկայիս աշխարհաքաղաքական կոնֆիգուրացիայի պայմաններում Իսրայելի հում նավթի վերամշակման պիկային հնարավորությունը կարելի է գնահատել 240-260 հազ.բ.օ. տիրույթում: Հասկանալի է, որ այս գնահատականը կփոփոխվի նոր վերամշակող հզորությունների թողարկման դեպքում:

4. Հում նավթի ներկրումների աշխարհագրությունը և «գորշ շուկան»

Հիմնվելով ՏԲԴ առցանց գրադարանի տվյալների վրա՝ Աղյուսակ 1-ում ամբողջացնում ենք Իսրայել հում նավթի ներկրումների ֆինանսական ծավալների (մլրդ ԱՄՆ $) ու դրանց սկզբնաղբյուր երկրների մասին բոլոր տվյալները՝ հասանելի 2018թ. սեպտեմբերի դրությամբ: Բոլոր այն դեպքերում, երբ հում նավթի ներկրումների աղբյուրը հայտնի չէ, ՏԲԴ գրադարանում դրանք մատնանշվում են *«Areas»* (Տարածքներ) վերնագրով: Աղյուսակում մենք այդ ներկրումները գունավորել ենք գորշ գույնով:

Ինչպես տեսնում ենք, 1995-2016թթ. Եգիպտոսից, Նորվեգիայից և Մեքսիկայից հում նավթի ներկրումներն Իսրայել հետզհետե փոխարինվում են ՌԴ-ից, Ադրբեջանից և Ղազախստանից հում նավթի ներկրումներով: Դիտարկվող ժամանակահատվածում ՌԴ-ից հում նավթի ներկրումները կազմել են $3.1 մլրդ, Ղազախստանից՝ $12.7 մլրդ և Ադրբեջանից՝ $14.3 մլրդ համապատասխանաբար: Ընդ որում, 2000-03թթ. ընթացքում, համաձայն ՏԲԴ տվյալների, ՌԴ-ն եղել է Իսրայելի հում նավթի թիվ մեկ մատակարարը, իսկ 2008-ին և 2014-ին թիվ մեկ մատակարարը եղել է Ադրբեջանը: Ուշագրավ է, որ դիտարկվող 22 տարիներից 12-ի համար (1996-98, 2004-07, 2009-13թթ.) Իսրայելի հում նավթի թիվ մեկ մատակարար են եղել անհայտ վայրերից «գորշ մատակարարները»: **1995-2016թթ. Իսրայել հում նավթի «գորշ մատակարարները» կազմել են $38.0 մլրդ կամ ընդհանուրի ($72.25 մլրդ) 53%-ը:**

[17] Վերջին այսպիսի հարվածի ժամանակ (2018թ. սեպտեմբերի 24) խոցվեց ՌԴ օդուժի Իլ-20 հետախուզական օդանավը:

Աղյուսակ 1.

Հում նավթի ներկրումներն Իսրայել 1990-2015թթ.
Գումարային՝ մլրդ $ և ըստ երկրների՝ % (աղբյուրը՝ ՏԲԴ)

մլրդ $		1	2	3	4	5	6	7
1995	***0.15***	Եզպ. 100%						
1996	***1.36***	?, 70%	Եզպ. 23%	Նոր. 5.8%				
1997	***1.37***	?, 76%	Եզպ. 18%	ՌԴ, 4.9%	Մեք. 1.7%			
1998	***0.99***	?, 83%	Եզպ. 8.6%	ՌԴ, 7%	Մեք., 1%			
1999	***0.2***	Եզպ. 56%	ՌԴ, 31%	Մեք. 13%				
2000	***0.5***	ՌԴ, 61%	Եզպ. 32%	Մեք. 7.3%				
2001	***0.35***	ՌԴ, 63%	Եզպ. 29%	Մեք. 7.1%				
2002	***0.36***	ՌԴ, 81%	Մեք. 11%	Եզպ. 7.4%	Ղազ, 42%			
2003	***0.56***	ՌԴ, 93%	Մեք. 7.4%					
2004	***2.32***	?, 55%	ՌԴ, 16%	Ղազ., 14%	Ադր., 13%			
2005	***3.62***	?, 72%	Ղազ, 18%	ՌԴ, 4.1%	Ադր., 3.7%	Մեք. 1.8%		
2006	***4.44***	?, 67%	Ղազ., 14%	Ադր., 13%	ՌԴ, 4.3%	Մեք., 1.5%		
2007	***4.83***	?, 67%	Ղազ., 21%	Ադր., 5.7%	ՌԴ, 4.2%	Մեք. 1.5%	Վրս. 0.25%	
2008	***7.86***	Ադր., 44%	Ղազ., 28%	?, 26%	Մեքս. 1.5%	ՌԴ, 0.47%		
2009	***4.84***	?, 52%	Ադր., 25%	Ղազ., 23%				
2010	***6.37***	?, 47%	Ադր., 27%	Ղազ., 20%	ՌԴ, 5.60%			
2011	***8.01***	?, 73%	Ղազ., 17%	Ադր., 9.9%				
2012	***8.8***	?, 61%	Ադր., 18%	Ղազ., 17%	Սնգ., 3.5%			
2013	***8.44***	?, 75%	Ադր., 15%	Ղազ., .5%	Իտլ. 0.5%			
2014	***3.34***	Ադր., 53%	Ղազ, 44%	ՌԴ, 3.3%				
2015	***0.81***	Ադր., 75%	Ղազ., 24%	ՄԹ. 1.2%				

Ընդ որում, այս գնահատականը կոնսերվատիվ է: Ամենայն հավանականությամբ, «գորշ մատակարարներ» են եղել նաև 1999-2003թթ. և 2015թ., ելնելով այն հանգամանքից, որ այդ տարիների հում նավթի ներկրումների գումարային ծավալները, ըստ ՏԲԴ-ի, արտառոց փոքր են եղել ($0.15-ից 0.8 մլրդ, $2.0-ից 8.0 մլրդ-ի համեմատ):

Աղբյուրներ և գրականություն

1. *Барух, Бен,* Израильская нефть, история вопроса. *Институт Ближнего Востока*, 30 сентября, 2012, http://www.iimes.ru/?p=15695
2. *White, Jeffrey,* A War Like No Other: Israel vs. Hezbollah in 2015. *The Washington Institute*. January 29, 2015, https://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/a-war-like-no-other-israel-vs.-hezbollah-in-2015.

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՐԻԹԻՇ ՓԵԹՐՈԼԻՈՒՄԻ ՆԱՎԹԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ

Արմեն Մանվելյան[*]

Անդրադառնալով Բրիթիշ Փեթրոլիումի տարեկան զեկույցներին՝ նշել էինք, որ էներգակիրների և հատկապես նավթի արդյունահանման ու սպառման հարցերը դիտարկելիս կարելի է նկատել, որ տեղի է ունեցել աշխարհառազմավարական փոփոխություն, ինչն արտահայտվում է մի շարք գործոններով: Նախ՝ դա Պարսից ծոցի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի դերի նվազումն է նավթի համաշխարհային շուկայում:

Գաղտնիք չէ, որ այս տարածաշրջանում է կենտրոնացված նավթի համաշխարհային պաշարների մոտ 45%-ը, այս հանգամանքը նպաստել էր, որ տարածաշրջանը ձեռք բերի ռազմավարական նշանակություն էներգետիկ աշխարհաքաղաքականության համակարգում: Ծոցի պետություններն իրենց աշխարհաքաղաքական այս առավելությունն իրականացնելու համար ստեղծեցին Նավթ արտահանող պետությունների կազմակերպությունը, որն ավելի շատ հայտնի է ՕՊԵԿ անվամբ:

Այս կառույցի նպատակն էր պաշտպանել նավթ արդյունահանող հիմնական պետությունների շահերը արևմտյան նավթային ընկերություններից, որոնք իրականում տիրապետում էին այդ պետությունների եկամտաբեր հանքերին և փաստորեն իրենց կամքն էին թելադրում այդ շուկայում: Նման քաղաքականությունը՝ ՕՊԵԿ-ի ստեղծումը, ուղղված էր Արևմուտքի դեմ, քանի որ Եվրոպան և ԱՄՆ-ն էին նավթի ամենախոշոր սպառողներն աշխարհում:

Այսինքն՝ նավթի միջազգային շուկան աչքի էր ընկնում բևեռացվածությամբ, որտեղ մի բևեռում նավթ արդյունահանող պետություններն էին՝ հանձին ՕՊԵԿ-ի, իսկ մյուսում՝ նավթ սպառողները, հանձին Արևմուտքի (Եվրոպա և ԱՄՆ): Սակայն սա համաշխարհային նավթի շուկայում ան-

[*] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.:

ցած դարի 70-ական թթ. իրավիճակն էր, ներկայում իրողություններն ամբողջովին փոխվել են, և թե՛ Մերձավոր Արևելքը, թե՛ Արևմուտքը կորցրել են էներգետիկ աշխարհառազմավարական նշանակությունը. առաջինը դադարել է լինել նավթի հիմնական մատակարարը, իսկ երկրորդը՝ նավթի հիմնական սպառողը:

Ինչպես ներկայացվել էր նախորդ հոդվածում, տեղի է ունեցել աշխարհառազմավարական տեղաշարժ, ինչը փոխել է իրավիճակը նավթի համաշխարհային շուկայում: Ներկայում ՕՊԵԿ անդամ չհանդիսացող պետություններն արտադրում են աշխարհում սպառվող նավթի մոտ 60%-ը, իսկ ամենախոշոր սպառողների՝ Եվրոպայի և ԱՄՆ-ի փոխարեն դոմինանտ են Չինաստանը և Հնդկաստանը: Այս փոփոխությունները հանգեցրել են նրան, որ ընդհանուր առմամբ նվազել է ՕՊԵԿ և առհասարակ Մերձավոր Արևելքի նշանակությունը, փոխարենը՝ մեծացել է այն երկրների դերը, որոնք կտրուկ ավելացրել են նավթի արդյունահանումը:

Նավթի արդյունահանման շուկայում պատվավոր առաջին տեղը, ինչպես նշել էինք, զբաղեցնում է ԱՄՆ-ը: Այս հանգամանքն էականորեն փոխում է այս պետության նշանակությունն այդ շուկայում՝ վերածելով նրան ամենախոշոր սպառողից ամենամեծ արտադրողի: ԱՄՆ-ը նավթի արդյունահանման ծավալներով ազդում է այդ ապրանքի գնագոյացման վրա:

2014-ից սկսած՝ կարելի է ասել, ԱՄՆ-ը էականորեն նվազեցրել է նավթի ներմուծումը, հատկապես Մերձավոր Արևելքից և Կոնգրեսի թույլտվությամբ հանել է 1976թ. արգելքը այդ հումքի արտահանման համար. ԱՄՆ-ը սկսել է նավթ արտահանել: Այս փոփոխությունն էլ ազդել է նավթի շուկայի վրա՝ մեծապես նպաստելով այդ ապրանքի գների նվազմանը:

Սպառման ոլորտում, ինչպես նշել ենք, «պատվավոր» առաջին հորիզոնականները զբաղեցնում են Չինաստանը և Հնդկաստանը: Այս իրողություններն էլ նոր օրակարգ են թելադրում էներգետիկ համաշխարհային շուկային՝ ստիպելով նորովի նայել ու դիտարկել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում այսօր մեր աչքի առջև:

Ըստ Բրիթիշ Փեթրոլիումի տարեկան զեկույցի (*Statistical Review of World Energy-2018*)[1]՝ աշխարհում թիվ մեկ նավթ արդյունահանող պետությունը 2017թ. եղել է ԱՄՆ-ը՝ 13 միլիոն 57 հազար բարել օրական,

[1] BP Statistical Review of World Energy-2018, https://www.bp.com/content/dam/bp/en/corporate/pdf/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf

կամ աշխարհում արդյունահանվող նավթի 14,1%-ը: Նկատենք, որ 2017թ. նավթի արդյունահանումը ԱՄՆ-ում նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 5,6%, և այս աճը շարունակական է:

Նավթի արդյունահանման ծավալով այս ցուցակի պատվավոր երկրորդ հորիզոնականը՝ 11 միլիոն 951 հազար բարելով, ինչպես և սպասվում էր, զբաղեցնում է Սաուդյան Արաբիան: Վերջինս արդյունահանում է համաշխարհային նավթի 12,9%-ը, սակայն այստեղ, ի տարբերություն ԱՄՆ-ի, նավթի արդյունահանման նվազման միտում կա մոտ 3,6%-ով:

ԱՄՆ-ին և Սաուդյան Արաբիային հաջորդում է Ռուսաստանի Դաշնությունը՝ 11 միլիոն 257 հազար բարել տարեկան ցուցանիշով, ինչը կազմում է աշխարհում արդյունահանվող նավթի 12,2%-ը: Ռուսաստանում ևս արդյունահանման նվազման միտում կան, սակայն այն կազմում է ընդամենը 0,1%:

Այս երեք պետությունները, միանշանակ, առաջատարն են նավթի արդյունահանման համաշխարհային շուկայում: Նրանց հաջորդող պետությունները՝ Իրանը և Կանադան, արդյունահանում են օրական համապատասխանաբար 4 միլիոն 982 հազար և 4 միլիոն 831 հազար բարել:

Այսպիսով, ըստ *BP*-ի տարեկան զեկույցի՝ ՕՊԵԿ անդամ պետություններն օրական արդյունահանում են մոտ 39 միլիոն 436 հազար բարել նավթ կամ աշխարհում արդյունահանվող նավթի 42,6%-ը, իսկ ՕՊԵԿ անդամ չհանդիսացող պետություններն արդյունահանում են մոտ 53 միլիոն 213 հազար բարել նավթ, ինչը կազմում է ընդհանուրի մոտ 57,4%-ը: Եթե ՕՊԵԿ անդամ պետություններում նավթի արդյունահանման նվազում է նկատվում, ապա ՕՊԵԿ անդամ չհանդիսացող պետություններում, ընդհակառակը, որոշակի աճ կա:

Նման իրավիճակը պայմանավորված է նավթի գնի վրա ազդելու քաղաքականությամբ: Եթե ՕՊԵԿ անդամ պետություններն այն ցանկանում են բարձրացնել, ապա հիմնական սպառողները, ընդհակառակը, փորձում են նվազեցնել այն: Այս պայքարը շարունակական է, ինչն արտահայտվում է նաև շուկայում նավթի նկատմամբ պահանջարկի և առաջարկի անընդհատ փոփոխությամբ:

2017թ. նավթի օրական պահանջարկն աճել է օրական մոտ 1.7 միլիոն բարելով, սա աննախադեպ աճ է, քանի որ նախորդ 10 տարիների ընթացքում նավթի սպառման ծավալների աճը միջինը կազմել է 1.1 մի-

լիոն բարել/օրական: Ամենամեծ աճը, ինչպես և սպասվում էր, եղել է Չինաստանում՝ 0,5 մլն բ/օրական: 2017թ. զարմանալիորեն նավթի պահանջարկն աճել է նաև Եվրոպայում և ԱՄՆ-ում, համապատասխանաբար 0,3 և 0,2 մլն բարել/օրական չափով, սա՝ այն դեպքում, երբ այնտեղ վերջին տասնամյակում կայուն կերպով գրանցվում էր նավթի սպառման ծավալների անկում:

Նավթի նկատմամբ պահանջարկի ավելացումը կարելի է բացատրել տնտեսական այն աճով, որը վերջին տարիներին գրանցվում է թե՛ Եվրոպայում և թե՛ ԱՄՆ-ում: 2008թ. ֆինանսական հայտնի ճգնաժամից հետո այս պետությունների տնտեսություններում տեղի են ունեցել դրական տեղաշարժեր, ինչն էլ ազդել է նավթի պահանջարկի աճի վրա, այս գործընթացին նպաստել են նաև նավթի ցածր գները, որոնք գրանցվել էին 2015-ից հետո:

Ինչ վերաբերում է նավթի սպառման ծավալներին, ապա այստեղ առաջատարը ԱՄՆ-ն է՝ 19.8 մլն բարել/օրական կամ համաշխարհային պահանջարկի 20.2%-ը, 2017թ. այն աճել է 1%-ով, ինչն աննախադեպ է, քանի որ նախորդ 10 տարիներին անկումը կազմում էր միջինը 0.5% տարեկան: Նկատենք, որ ԱՄՆ-ը, էներգակիրների սպառման միավորված հաշվարկում (նավթ, գազ, ածուխ, միջուկային և վերականգնողական էներգետիկա) առաջին տեղը զիջելով Չինաստանին, այնուամենայնիվ, շարունակում է առաջատարը լինել նավթի սպառման բնագավառում:

Չինաստանի ցուցանիշն այստեղ երկրորդն է՝ 13% կամ 12.7 մլն բարել/օրական: Նավթի սպառման ծավալը 2017թ. Չինաստանում աճել է 4%, այն դեպքում, երբ նախորդ 10 տարիներին պահանջարկի աճը տարեկան կազմել է միջինը 5.2%:

Այս երկրներից հետո նավթի ամենախոշոր սպառողները՝ 4.8% և 4.1% համապատասխանաբար, Հնդկաստանը և Ճապոնիան էին: Սակայն, եթե Հնդկաստանում նավթի սպառումը, տարեկան կտրվածքով, 2017թ. աճել է 2.9%-ով, ապա Ճապոնիայում նվազել է 1.1%: Հետաքրքիր է, որ նավթի սպառման ծավալներով առաջատար հնգյակն ավարտում է Սաուդյան Արաբիան՝ 4% տարեկան, իսկ Ռուսաստանն այստեղ ընդամենը 6-րդն է՝ 3.3%:

Այսպիսով, նավթի պահանջարկի և առաջարկի շուրջ ընթացող մրցակցությունում կարևորվում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշր-

ջանը, և այս միտումը պահպանվում է արդեն մեկ տասնամյակից ավելի: Այս տարածաշրջանում է սպառվում արտադրված նավթի մոտ 35.2%-ը, Հյուսիսային Ամերիկան՝ Կանադան, ԱՄՆ-ը և Մեքսիկան, երկրորդն են՝ 24.7%, սակայն եթե այստեղ գրանցվում է շարունակական անկում տարեկան 0.6%-ով, ապա Ասիա-խաղաղօվկիանոսյան շրջանում աճը կազմում է 3%:

Այսպիսով, նավթի սպառման ծավալների աճի առումով՝ պահանջարկ-առաջարկ հաշվառմամբ, պահպանվում է այն միտումը, որ նավթի սպառման հիմնական աշխարհառազմավարական կենտրոնը Հյուսիսային Ամերիկայից և Եվրոպայից տեղափոխվել է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան: Այս փոփոխությունը զուգակցվել է նաև Միջին Արևելքի՝ որպես նավթի հիմնական արտադրողի, դերի նվազմանը, ինչի արդյունքում այդ տարածաշրջանը կորցրել է նախկին գրավչությունը որպես նավթի հիմնական արտադրող աշխարհում: Սա էլ, իր հերթին, հանգեցրել է Պարսից ծոցի էներգետիկ աշխարհառազմավարական դերի նվազմանը, նաև ՕՊԵԿ-ի՝ որպես նավթի հիմնական մատակարարի, նշանակության անկմանն աշխարհում:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 4 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 24.10.2018թ.
Թիվ 8 (97), 2018թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում